



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պատմեացաւ թիւ
Պաշտամայութիւնը և
զեկուարիթ



1.999

Հրամ. Գեղարք Խանագասեան



ԳԱՂԵԿԱՑՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆ


ՊԵԿԱՎԱՐՆԵՐԸ




Տպարան „ՇիբԱԿԻ“ Ալէքսանդրապոլ

1907

(51)



Հ րամ. Գ ե ն ո ր գ Խ ա ն ա զ ա ս ե ա ն



Դ Ա Հ Ն Ա Կ Ց ՈՒ Թ Ի Ւ Ն Ե

Ե Ւ Ի Ռ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ն Ե Ր Ը

Տպարան „Շ Ի Ռ Ա Կ“ Ա լ ե ք ս մ ն պ ր ա պ ո ւ

1907



(51)



ՊԵՏՄԱԿԵՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԲԱՑԱՑՐՈՒԹԻՒՆՆԵՐ

I.

Տարօրինակ է, չափազանց տարօրինակ է տեսնել թէ ինչպէս բարկանում, փրփրում ու կատաղում են Դաշնակցութեան այն «մեծ» ու «հանճարեղ» հասարակական գործիչներն ու «տաղանդաւոր» հրապարակախօսները, իրանց «ամենազօր» կազմակերպութեան մէջ պատահած պառակտումներն ու բաժանումները տեսնելով։ Տարօրինակ է, ասում ենք, այն տեսակէտից, որ իսկական հասարակական գործիչը, իսկական և հմուտ հրապարակախօսը հէնց այն ժամանակ միայն կարող է իր գիրքի բարձրութեան վրա կանգնած լինել, երբ մի որևէ խոշոր հասարակական պրօցէս կատարվելու ժամանակ, նա կարողանայ իսկոյն ըմբռնել այդ պրօցէսի ներքին իմաստը, նրա բնական պատճառները և, առանց շուարելու, առանց գլուխը կորցնելու, նրա արժանի գնահատութիւնը անել։ Եթէ նա՝ հասարակական գործիչ-հրապարակախօսը, պատմաբանի անաշառ լրջութեամբ ու պաղարինութեամբ, կատարվող մեծ պրօցէսի իսկական ու բնական պատճառները քննելուց յետոյ, անկարող է դրանց վերացնել և պրօցէսի առաջը առնել, նա գոնէ, պիտի լաւ հասկանայ ու ըմբռնի նրանց և գիտենայ աւելի խորը կերպով թափանցել հասարակական երեւոյթի իսկական էութիւնը։

Սակայն անվերջ ու շարունակ իրանց գլուխները գովող և իրանց հասցէին մշտապէս խունկ ծխող Դաշնակցութեան

(Արտասպած «ՄՇԱԿԻՑ»)

42344-ՀՀ

ՀԲ 9315

զեկավարները, միանգամայն անընդունակ են հասարակական մեծ երևոյթներին լրջութեամբ վերաբերվելու, և շուարած ու զլուխները կորցրած վիճակի մէջ են ընկել ու այլս բոլորովին չեն հասկանում, թէ ի՞նչ են անում ու ի՞նչ խօսում իրանք:

Դաշնակցութեան ներկայ զեկավարները, փոխանակ այդ՝ իրանց սրտին մօտիկ մեծ երևոյթի պատճառները լրջութեամբ քննելու, զայրոյթով հրապարակ են նետվել ու սրա և նրա օձիքից են բռնում, հարայշ-հայշ-հարայ աղաղակում, ասելով թէ Դաշնակցութեան մէջ պատակում գցողները, նրան անդամանատողները նրա ոխերիմ հակառակորդ աօց. դեմոկրատներն ու «Մշակն» են և կամ սրա մէջ պատահական կերպով ատաստարան գտած Միհրանը, Փիլիպոսն ու Կիրակոսներն են:

Կրկնում ենք, տարօրինակ է, չափազանց տարօրինակ է «խտելիքնոտ» չէֆերի այդ վարժունքը, որոնք լուրջ հասարակական գործիչներ երեալու յաւակնութիւնը ունեն միշտ:

Եթէ նրանք, իսկապէս, լրջութիւն ունենային ու արժանի լինէին իրանց կոչմանը, պիտի վաղուց գուշակէին ու իմանային, որ, միանգամայն՝ փուած թելերով միմհանց կապված և զանազան, բոլորովին պատահական հասարակական դէպքերի ու անցքերի շնորհով ստեղծված և թէկուղ հսկայական զօրութեան հասած, Դաշնակցութիւնը անկարող պիտի լինէր անվերջ իր գրութեան մէջ մնալ ու նա պիտի անպատճառ կազմալուծվէր, հէնց որ այդ պատահական պայմանները, պատմական հանգամանքները, որոնք պայմանաւորում էին նրա գոյութիւնն ու հզօրութիւնը, վերանային կամ փոփոխութիւնների ենթարկվէին:

Դաշնակցութեան մեծապատիւ հասարակական գործիչները միթէ չը գիտեն ու չեն հասկանում, որ ամեն մի խոշոր հասարակական երեսոյթ, ինչպէս և ամեն մի խոշոր հասարակական ու քաղաքական կազմակերպութիւն միշտ որոշ պայմանների և շատ լուրջ պատճառների արդիւնք է լինում: Իսկ հէնց որ այդ պայմանները փոխվում են, պատճառները վերանում, երեսոյթն էլ անհետանում է, կազմակերպութիւնն

էլ լուծվում է: Եւ եթէ այս օրէնքը ձիշտ է և ընդունվում է բոլոր հասարակական երեսոյթների ու կազմակերպութիւնների համար, նա պիտի ընդունվի և Դաշնակցութեան վերաբերեալ: Այդ պարագայում պէտք է միանգամայն հաշտվել այն մտքի հետ, որ Դաշնակցութեան մէջ առաջացած ներկայ րէակցիան մի շատ բնական երեսոյթ է:

Մենք աւելին կատենք. Դաշնակցութեան ներկայ րէակցիան ոչ միայն շատ ժամանակակից ու ընական երեսոյթ է, այլ և նա սաստիկ ուշացած է. այդ րէակցիան տեղի պիտի ունենար սրանից շատ տարիներ առաջ, եթէ միայն մի քանի քաշը ընկած պատահական հանգամանքները չը նպաստէին նրան իր անբնական գոյութիւնը պահպանելու:

Պարզենք մեր միտքը:

Ինչպէս յայտնի է, Դաշնակցութիւնը կազմակերպվել ու հրապարակ էր եկել Տաճկահայստանի պատագրական գործը վարելու միստիայով: Եւ, ինչպէս հաւատացնում են, այդ կազմակերպութիւնը իր գործունչութիւնը սկսել է 1890 թւականից: Բայց յայտնի է և այն, որ Դաշնակցութիւնից մօտ երկու տարի առաջ նոյն միստիայով հրապարակ էր եկել մի այլ կուսակցութիւն՝ Հնչակեան կուսակցութիւնը, որի անդրանիկ և ամենամեծ գործերից մէկն էր 1890 թ. յուլիսի 15-ի Պօլսում (Գում-Գափուի) կատարած առաջին ազգային ցոյցը, որը, կարելի է ասել, սկիզբը ըստ բոլոր յետագայ յեղափոխական շարժումներին և որի ազգեցութեան շնորհով է հէնց, որ սկիզբ առաւ ու կազմակերպվեց Դաշնակցութիւնը: (Ցեղն է այստեղ փակազծի մէջ ասել, որ տարեղարձներ ու տասնամետակներ կատարելու սիրահար՝ Դաշնակցութեան չէֆերը չափազանց մոռացութեան են առւել հայկական յեղափոխութեան անզլանիկ գոհերին, որոնց խիզախ նահատակութիւնը շատ աւելի արդիւնաւոր հետեւնքներ ունեցաւ, քան բանկ Օտոմանն ու Խանասօրը):

Դաշնակցութեան զեկավարներին շատ լաւ յուցանի է և այն, որ Հնչակեան կուսակցութիւնը, որը, այդ անկարող են ուրանալ, մինչն 1896 թ. Տաճկաստանի բոլոր յեղափո-

խական շարժումների ամբողջ ծանրութիւնը միայնակ իր ուսերի վրա էր կրում, 96 թւականին յանկարծ մի սոսկալի բէակցիայի ու ներքին երկառակումների մէջ ընկաւ, որոնց շատ բնական հետևանքը այն եղաւ, որ այդ՝ ոչ պակաս վիթխարի կուսակցութիւնը քայլայվեց, երկու մասի բաժանվեց ու մինչեւ այսօր էլ անկարող է նորից ոտքի կանգնել: Ճիշտ է, այդ կուսակցութեան երկու ֆրակցիաներըն էլ գեռ անուանական կերպով քարշ են տալիս իրանց գոյութիւնը, բայց իրապէս նրանք արդէն մի-մի դիակներ:

Արդ՝ ի՞նչն էին այդ զօրաւոր կուսակցութեան այդ ձևով քայլայվելու ու ամբողջ աշխարհի առաջ խայտառակվելու իսկական պատճառները: Միթէ այդ ժամանակվայ և այդ կուսակցութեան մէջ եղած Միհրաններն ու Սեւելչոնները, ինչպէս որ, Դաշնակցութեան այժմեան դեկավարների նման, միամտաբար կարծում և հաւատացած էին այն ժամանակ շատերը: Եթէ զանազան անհատները գերբնական ոյժ ունենային մի ձեռքի հարուածով այդպիսի ամրակուռ կազմակերպութիւնը քար ու քանդ անելու, նրանք այդ կամէին աւելի առաջ, մի այլ ժամանակ: Բայց ինչո՞ւ այդ «չարամիտները» հրապարակ եկան ու իրանց քայլայիչ «չարամտութեան» համար պարարտ հող գտան հէնց Թիւրքիայում սկսված հայկական կոտորածներից յետոյ, երբ նոյն իսկ Սուլթանի կողմից սուորագրված Մայիսեան րեփորտների ծրագիրը վերջնականապէս Բուֆորի ջուրն էր նետված ու հայ ժողովրդի ազատութեան մասին այլևս ոչ մի յոյս չէր մնացել:

Բանն էլ հէնց նրանումն է, որ քանի այդ յոյսը դեռ սասակի վաս էր ամենքի մէջ, քանի որ բոլորն էլ կատարելապէս վստահ էին իրանց ձեռնարկած «գործի» շիտակութեան ու աջողութեան վրա, ոչ ոք չէր էլ մտածում քննութեան առնել ու կրիտիկայի ենթարկել այդ կուսակցութեան ոչ ծրագիրը և ոչ էլ նրա գործունէութեան եղանակները: Բայց հէնց որ գործը անաջող ելք ունեցաւ, հէնց որ բոլորն էլ նկատեցին որ հայ ժողովրդի յօնքը շինելու փոխա-

րէն խփել են նրա աչքն էլ են հանել այն ժամանակ այս կուսակցութեան մէջ բոլորն էլ զգաստացան ու սկսեցին միւմեանց մէջ այդ գժբաղզութեան խկական հեղինակներին որոնել:

Դա մի շատ բնական երեսյթ էր և այլ կերպ չէր էլ կարող լինել: Հնչակեան կուսակցութեան նպատակը կազմող «գործի» մնանկութիւնը անհրաժեշտորէն ու հետևողաբար պիտի մնանկութիւն առաջացնէր և այդ կուսակցութեան մէջ, որ և եղաւ:

Սակայն ինչո՞ւ նոյն մնանկութիւնն ու նոյն քայլայում այն ժամանակ տեղի չունեցաւ նաև Դաշնակցութեան մէջ: Զէ՞ որ սա էլ միենոյն մնանկացած «գործի» համար էր հրապարակ եկել ու, ինչպէս այժմ՝ մեզ հաւատացնում են, 1890 թւականից այդ «գործովն» էր զբաղւել:

Ըստ երեսյթին դա մի տարօրինակ հանելուկ է, սակայն, մի շատ ճեշտ լուծելի հանելուկ:

II.

Կրկնում ենք, ի՞նչպէս պատահեց, որ Հնչակեան կուսակցութեան հետ միաժամանակ բէակցիայի ու քայլայման չենթարկվեց և Դաշնակցութիւնը, քանի որ այդ երկու կուսակցութիւնն էլ միենոյն միստիցով ու միենոյն յոյսերով էին հրապարակ եկել: Զէ՞ որ այդ յոյսերը 96 թ. միանգամայն խորտակվեցին:

Այդ, ըստ երեսյթին, խրթին հանելուկը շատ պարզ ու հասկանալի կը գառնայ ամենքի համար, եթէ մենք նրանց յիշեցնենք, որ Դաշնակցութիւնը, հակառակ նրա չէֆերի բոլոր պնդումներին, մինչև 1896 թ. Տաճկաստանի համար իրապէս բոլորովին գոյութիւն չունէր և նա մինչեւ այդ ժամանակ մի կատարեալ Փիկցիա էր:

Ճիշտ է, Դաշնակցութիւնը կազմակերպվեց ու իր հիմքը գրեց Կովկասում գեռ 1890 թւականին, բայց նա մինչեւ 96 թւականը ոչ մի գործունէութիւն չունեցաւ Տաճկաստա-

նում ու ոչ մի ներգործական դեր չը կատարեց այստեղ կատարվող դէպքերի վրա։ Այդ մասին կարող են վկայել այդ կուսակցութեան հիմնագիրը բարեխրիզմ անդամները, ուրոնք աւելի մօտիկից են ծանօթ այդ կուսակցութեան պատմութեանը, քան զանազան Թոփչեաններ ու Խաժակներ, ուրոնք այն ժամանակ, երեսի, դեռ աշակերտական նստարանների վրա էին գտնվում, իսկ վերջն էլ «մեծ-մեծ» գործերով զբաղված լինելով, ժամանակ չեն ունեցել իրանց կուսակցութեան անցեալի հետ գէթ փոքր ինչ լւա ծանօթանալու, և ամենայն անբարեխղճութեամբ աղաւաղում են անցեալի դէպքերն ու պատմութիւնը հազար ու մի տեսակ աղաւաղումներով և բեկլամներով։

Որչափ էլ տարօրինակ թւայ մեր ասածը, նա մանաւանդ զանազան լեգենդաներով սնված ու կրթված գաշնակցականներին, այնուամենայնիւ իրողութիւնը այն է, որ, կրկնում ենք, Դաշնակցութիւնը մինչև 1896 թ. գործունէութիւն չունեցաւ ու չը կարողացաւ ունենալ այն երկրում, որի համար նա կազմակերպվել ու երևան էր եկել։ Բայց, ի հարկէ, սրանով մենք չենք ուզում ասել, թէ այդ կուսակցութիւնը բոլորովին անգործ էր։ Ամենեին ոչ. նա գործում էր, նա գործում էր կովկասում և Ռուսաստանի ու այլ հայարնակ վայրերում։ Սակայն, նրա գործունէութիւնը կայանում էր նախ նրա մէջ, որ այդ բոլոր տեղերում կազմակերպութիւններ էր ստեղծում, երկրորդ՝ խիստ պրօպագանդ էր անում... «անիծված» հնչակեանների ու նրանց սօցիալիզմի դէմ, և երբորդ, որ ամենից զլխաւորն է, և որի վրա էր զարձված դաշնակցականների ամբողջ ուշագրութիւնն ու եռանգը, փող և միշտ փող էր հաւաքում...»

Որպէս զի մեր այս ասածները անբարեխղճութեան հետեանք ու գրպարտութիւն չը համարվի, մենք այս անգամ վկայ ենք բերում նախ այն մի քանի թուոցիկները, որ այն ժամանակ մերթ ընդ մերթ հրատարակում էր Դաշնակցութիւնը թերթի փոխարէն, և ապա՝ «Դրօշակի» այն ԱՆ-ը, որ մինչև 1894 թ. ամառը լոյս էին տեսնում տա-

րէնը մի և։ Թէ այդ թուոցիկներում և թէ «Դրօշակի» այդ ԱՆ-ում, կուսակցութիւնը միշտ տպագրում էր իր բոլոր ստացած ու հաւաքած գումարները, գումարներ, որոնք այն ժամանակվայ համար մի շատ խոշոր քան էին համարվում և այն ժամանակվայ՝ միշտ քաղցած ու մինչեւ կոկորդը արեան ու վտանգների մէջ խրված հնչակեանների նախանձն ու զայրոյթն էին շարժում։

Բայց, անբարեխիղն չը լինելու համար, կարեոր է այստեղ տաել, որ Դաշնակցութեան այդ գործունէութիւնն էլ շատ երկար չը տեսց՝ հազիւ մի երկու տարի, որովհետեւ նրանց շահատակութիւններն ու խաբերայութիւնները երեւան եկան և ժողովուրդը այլ ևս չէր վստահանում նրանց դրամ տալու։ Մոռացանք ասել, որ նրանց գլխաւորաբար աշխատ կովկասում մէծ դրամներ հաւաքել այն պարզ հիման վրա, որ նրանք միշտ հաւատացնում էին միամիտներին, թէ այստեղ, «երկրում» կատարված (ի հարկէ, միշտ հնչակեանների ձեռքով) հերոսական գործերը Դաշնակցութեան միջոցով են տեղի ունենում։

1892 թ. Դաշնակցութիւնը, իրրեկ կազմակերպութիւն, այլ ևս համարեա թէ կոյութիւն չունէր։ Գաւառական կազմակերպութիւնները, հիասթափված իրանց կենտրոնական վարչութեան (Թիֆլիսում նստած) չէ գերից, բողոքի ձայն էին բարձրացրել, գործունէութիւն էին պահանջում, բայց յեղափոխական գործ չը կար մէջ տեղում։ Ամեն կողմից լքված ու իրանց անելիքը չը պիտեցող չէ գերին էլ, անշուշտ, յաւիտենական մոռացութեան պիտի մատնվէին, եթէ ձիշտ այդ ժամանակ հրապարակ չը դար կաթողիկոսական ընտրութիւնը, որի ժամանակ մէր «սօցիալիստները», մոռանալով իրանց յեղափոխական լինելը, «Մշակի» դրօշակի տակ մտած, ընտրողական անվտանգ պայքարի մէջ նետվեցին իրեն այլևս գուտ մշտականներ։

Հասկանալու համար, թէ որ աստիճան էին այդ հերոսները յափշտակված այն ժամանակ կաթողիկոսական ընտրութիւններով ու թէ որպիսի մէծ յոյսեր ունեին նրանք

Խրիմեան հայրիկի կաթողիկոսութիւնից, և միւնոյն ժամանակ ցոյց տալու համար, թէ որպիսի վերաբերմունք ունէին նրանք դէպի հայկական յեղափոխութիւնը ընդհանրապէս և դէպի հնչակեանները մասնաւորապէս, մենք այստեղ, իրքն իշխաւութիւնից մասնաւորապէս, մենք այստեղ, իրքն իշխաւութիւնից մասնաւորապէս:

Ճիշտ այդ ընտրութիւնների ժամանակներում Սասունի հնչակեան գործիչ յայտնի Մ. Տամագեանը մի ընդարձակ և մանրամասն: տեղեկադրութիւնը էր ուղարկում հնչակեան կ. կենարոնի իր ընկերներին, որ այդ ժամանակ գըտնվում էին Աթէնքում:

Տեղեկագրութիւնը, ի հարկէ, պէտք էր ուղարկել յատուկ սուրճանգակով, որովհետեւ տաճկական պօստին անշարժի էր վատահանալ: Բայց չը որ սուրճանգակն էլ կարող էր ձերքակալվել ու վտանգվել: Բւտի աւելի առաջնորդ լինելու համար, թէ կարեւոր հաղորդագրութիւնը անպատճառ նպատակին կը համնի, Տամագեանը ճիշտ բիրլիական խորամանկ Յակոբի օրինակին էր գիմել: Նա միւնոյն տեղեկութիւնները երկու բոլորովին տարբեր ճանապարհներով ու տարբեր սուրճանգակներով էր ուղարկել, որպէսզի, եթէ գրանցից մէկն ու մէկը վտանգվի, գոնէ միւսը ապահով տեղ համնի: Խըրաքանչիւր սուրճանգակի համար երկու մարդ էին ընտրված, որոնցից երկուուշ ճանապարհ էին ընկել Տիգրանակերտի և Կիլիկիայի վրայով, իսկ միւս երկուուշ Ալաշկերտի վրայով: Այս վերջինները մինչև Աթէնք չը պէտք է գնային, այլ Թիֆլիսում քերպած թղթերը պիտի յանձնէին հանգուցեալ Գ. Արծրունուն, որին Տամագեանը յատուկ նամակով խնդրել էր, Թիֆլիսից այդ թղթերը պօստին յանձնել, Աթէնք ուղարկելու համար:

Եւ թնջ էք կարծում. առաջին շատ աւելի հեռաւոր ու շատ աւելի գժուարին ճանապարհով ուղերդուած սուրճանգակ տանողները, թէ շատ ուշ բայց անվտանգ ու ապահով տեղ էին հասել և թղթերը յանձնել ըստ պատկանելոյն: Իսկ Ալաշկերտի ճանապարհով եկողները հասել էին էջմիածին

Ճիշտ այն ժամանակ, երբ ամբողջ գաշնակցական շէֆերը այդաեղ էին հաւաքված, ընտրութիւնների համար: Հէնց այդ շէֆերին էին հանգիպել Տամագեանի ուղարկած մարդիկը, որոնց պարզամտութիւնից և կատարեալ վստահութիւնից օգտվելով, նրանք առել էին բոլոր թղթերը, խոստանալով թէ իրանք կամ Արծրունուն և կամ պօստին կը յանձնեն: Բայց չէին արել ոչ մէկը և ոչ միւսը: Այնուամենայնիւ նըրանք կարգացել էին բերված թղթերը և նոյն իսկ բարեհաճել էին իրանց կողմից մի վոքրիկ պատասխան էլ գրել Տամագեանին, մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ. «Առ այժմ հանգիսա մնացէք, շուտով Հայրիկը կաթողիկոս կը դառնայ և նա ամեն բան կանի ու Հայաստանն էլ կապատի»:

Անցնում է այդ գէպքից մի որոշ ժամանակ: 1893 թ. վերջերում թէ 94-ի սկզբներում (լաւ չեմ յիշում) Սասունից անձամբ կովկաս է գալիս յայտնի Մուշագը: Նա եկել էր այստեղ յայտնելու, որ թիւրք կառավարութիւնը ամենաշուրջ պատրաստութիւններ է տեսնում Սասունի վրա յարձակելու, որպէսզի այդպիսով ժամանակ չը տայ սասունցիներին ապստամբութեան համար պատրաստվելու: Ուստի խնդրում էր Մուշագը կովկասից շուտափոյթ օգնութիւն հասցնել, որպէսզի հնարաւորութիւն լինի այդ պատրաբնից ու սրից գրելելու: Նա խնդրում էր՝ կամ գրամ տալ սասունցիներին, հէնց տեղումը պէտք եկած պաշարեղէնները գնենու համար, և կամ, եթէ գրամ տալու վստահութիւն չունեն, թող ալիւր ու սազմամթերք ուղարկեն:

Շատերի գններն էր թակել Մուշագը, շատերին էր զլուխ խնդրանեցրել, բայց ոչինչ չէր ստացել գլխաւորաբար, ի հարկէ, այն պարզ պատճառով, որ տարիների ընթացքում դաշնակցականները այնպէս էին վարկարեկ արել հնչակեաններին, որ ոչ չէր վստահանում սրանց: Դաշնակցականների վարմունքը այս դէպքում կատարելապէս նըմանում էր այն ուսւական առածին, որ ասում է՝ «Չունը խոսի վրա էր նստել, ոչ ինք էր խոտն ուտում, ոչ էլ ու-

թիշներին էր թողնում ուտելու»: Շատ այս ու այն կողմն ընկնելուց յետոյ, Մուրագը, վերջապէս, դիմում է այն ժամանակվայ գաշնակցական ջօջերին ու նրանցից աջակցութիւն խնդրում:

— Մեր մնդուկը այժմ գատարկ է, — պատասխանում են ջօջերը Մուրագին, — բայց եթէ միջոցներ ունենայինք էլ, չէինք կարող ձեզ տալ որովհետև դուք հնչակեան էք: Իսկ եթէ դուք խոստանաք Սասունի գէպքերը չը կապել հնչակեան անուան հետ, այն ժամանակ մենք կարող ենք չուտով պէտք եղած միջոցները հայթայթել:

Մուրագը չէ համաձայնում և հիասթափված վերադառնում է Սասուն ձեռնունայն:

Եթէ Մուրագի կովկաս գալը ոչ մի օգուտ չը տուեց սասունցիներին, գոնէ նա մեծ օգտակարութիւն ունեցաւ Դաշնակցութեան համար: Կիսակենդան ու լիթարգիական քնի մէջ սուզգած գաշնակցականները, նկատելով, որ Մուրագի այս կողմերում երեալը չափազանց նպաստաւոր հետեւանքներ ունեցաւ հնչակեանների համար, տեսնելով, թէ ինչպէս Թիֆլիսում ու գաւառներում հետզհետէ Հնչակեան օժանդակիչ մասնաճիւղեր են կազմվում և, ժողովրդի ուշադրութիւնը իրանց վրա հրաւիրելով, ընդհանուրի համակրութեան առարկայ են դառնում, տեսնելով, ասում ենք, այդ բոլորը, գաշնակցականների նախանձը յանկարծ շարժգում է և նրանք ամբողջ թափով նորից հրապարակ են նետվում:

Սակայն նրանք հրապարակ են նետվում ոչ թէ սրի ու կրակի մէջ այրվող սասունցիներին կամ նրանց իբր թէ սիրած «գործին» օդնելու համար, այլ միմիայն և միմիայն կովկասեան նորարողբոյ հնչակեանների դէմ մաքառելու ու նոր ու նոր շահագործութիւններ անելու համար: Եւ իրանց այդ «սուբբ» ու «նուիրական» աշխատանքը աւելի աջողութեամբ առաջ տանելու համար, նրանք սկսում են իրանց օրգան «Գրօշակ»-ը կանոնաւորապէս ամիսը մի անգամ լոյս ընծայել: Այդ տեղի է ունենում 1894 թ. (եթէ յիշողութիւնը ինձ չէ դաւաճանում), ամառվայ ամիսներին միայն:



Եւ Դաշնակցութեան այդ՝ գուտ արտասահմանեամ Տիվի կատանի վերաբերեալ) «գործունէութիւնը» տեսում է մինչև 1896 թւականը, այսինքն՝ մինչ այն ժամանակ, երբ Հայատանի բէֆօրմների հարցը ֆիասկօ կրեց ու երբ, դրա շնորհով, ինչպէս ասացինք, իր հաշիւների ու, տարերիների ընթացքում փայփայած, սպասելիքների մէջ կատաւալապէս յուսախար եղած ու գլուխը կորցրած Հնչակեան կուսակցութիւնը ներքին երկպառակումների ու քայլայման մատնվեց:

Դաշնակցութեան 1890 թ. մինչև 1896 թ. ունեցած այդ գուտ արտասահմանեան գործունէութիւնից, որը բացառապէս կայանում էր փող հաւաքելու, հնչակեաններին բամբասելու, նրանց դէմ մաքառելու և մինոյն ժամանակ նրանց գործերը շահագործելու մէջ, մինք կարող էինք շատ ուշպեր պատմել, բայց մինք ամեններն դիտաւորութիւն չունենք Դաշնակցութեան պատմութիւնը գրելու, այլ միայն բազում էինք փաստացի կերպով ցոյց տալ և բացատրել թէ ինչո՞ւ Դաշնակցութիւնն էլ Հնչակեան կուսակցութեան հետ միաժամանակ երկպառակումների մէջ չընկաւ ու չը քայլայվեց, քանի որ նրանք երկուսն էլ հրապարակ էին եկել մինոյն միսսիան կատարելու և մինոյն նպատակին էին ձգուում, իսկ այդ միսսիան, այդ նպատակը հիմունքին խորտակված ու սնանկութեան էր մատնված 1896 թւականին:

Եւ եթէ կարողացաւ ընթերցողը մեզ հասկանալ այդ, ըստ երեոյթին, տարօրինակ հանելուկը պարզապէս բացարիւմ է նրանով, որ Դաշնակցութիւնը մինչև այդ թւականը «գործի» բուն ասպարիզում և ոչ մի գործունէութիւն չունենալով, այլ ընդհակառակը ամբողջ 6-7 տարի հէնց այդ «գործի» պարագիւրը լինելով, երբէք չէր կարող այդ գործի աջողութեան յոյսերով և անաջողութեան տառապանքներով այնպէս ապրած լինել, ինչպէս ապրել ու տառապէլ էին հնչակեանները: Թէև, ճիշտ է, Հայատանի ազատաւոթեան կամ բէֆօրմների հարցը հաւաքարապէս ամբողջ հայութեան արտին էլ մօտ է եղել միշտ, բայց և այն-

սլէս մինչև վերոյիշեալ թւականը այդ հարցի ամենամօտիկ տէրը չնչ. կուսակցութիւնն էր: Եւ եթէ այդ ձիշտ է, ուրեմքն և շատ բնական է, որ այդ հարցի ֆիասկօյի հանդիպելը հէնց այդ կուսակցութեան մէջ ամենախիստ բէակցիա պիտի առաջացնէր: Զէ որ եարէն տիրոջը ցաւ կը տայ: Իսկ Դաշնակցութիւնը «եարա» չունէր. ընդհակառակը՝ նրա շարքերում կային մարդիկ, որոնք ուրախ էին «գործի» ֆիասկօյից, որպէսզի չասվի, թէ՝ «Հնչակեանները Հայաստանը պատեցին», ուստի նրանք աւելի ևս հրահրելով չնչ. կուս. ներքին պառակտումները. շտապեցին քայլքայլող կուսակցութեան տեղը բռնել:

III.

Ո՞վ չէ յիշում 1896-ի կոտորածների սոսկալի թւականը ու նրան անմիջապէս յաջորդող այն ընդհանուր յուսախաբութիւնն ու հիամթափութիւնը, որ տիրեց ու քարացըրեց համայն հայութիւնը: Դա մի անսակելի ու աննկարագրելի բէակցիայի տարի էր, մի մուժ, խաւար, սոսկալի տարի: Հայ ժողովրդի տասնեակ տարիներով արած բոլոր հաշիւները, նրա փայլքայած ու իրականանալու բառէին մօտեցած բոլոր յոյսերը յանկարծ և անսպասելի կերպով մի անգամից խորտակված էին: Եւօքական մէծ պետութիւնները, նամանաւանդ Սնդիման ու Ռուսաստանը,—որոնց միջամըտութեան վրա այնչափ մէծ յոյսեր ունէին հայերը, որոնց ջանքերով էր հէնց լոյս աշխարհ եկել հռչակաւոր, բայց և անիծված 61-րդ յօդուածը,—հէնց իրանց նախաձեռնութեամբ մշակած Մայիսեան բէֆօրմները Սուլթանին էլ ստորագրել տալուց յետոյ, յանկարծ երես դարձրեցին հայերից, Պիդատոսի նման ձեռքները լուացին ու մի կողմքաշուեցին, թոյլ տալով «կարմիր» սուլթանին իր կարմիր ու ահռելի ոճրագործութիւնը կատարելու:

Այդպիսի սոսկալի և միանգամայն անսպասելի (գոնէ այն ժամանակ անսպասելի էր համարվում) volte-face ից ու այնպիսի ահռելի և չը տեսնփած կոտորածներից յետոյ, ինչպէս կարելի էր բէակցիայի չը ենթարկվել: Եւ, ինչպէս

ասացինք, չատ ընական է, որ այդ բէակցիային ամենից շուտ և ամննից աւելի ենթարկվողը պիտի լինէր այն կուսակցութիւնը, որ ամենից աւելի էր աշխատել, տառապել և զոհաբերութիւններ արել հայկական դատի համար, որը աւելի մօտ էր իրան զգացել այդ դատին և որը ամենից շատ էր փայփայել այդ դատի աջողութեան յոյսերը:

Քննենք մի քանի խօսքերով, թէ ի՞նչ հաշիւներով, ինչ յոյսերով և ինչ համոզումներով ու հաւատալիքներով էր դեկավարվում Հնչակեան կուսակցութիւնը, հայկական դատը իր ձեռքն առնելով ու Տաճկասանի յեղափոխական շարժումները սկսելով. քննենք և այն, թէ ինչումն էր կայանում այդ կուսակցութեան մէջ յետագյում տիրող բէակցիայի ու ներքին պառակտումների էութիւնը: Դա մեզ համար բանալի կը լինի և Դաշնակցութեան դործունէութիւնն ու ներկայ պառակտումները քննելու համար:

Ինչպէս յայտնի է, չնչ. կուսակցութիւնը իր երևան գալու հէնց առաջին օրից իրան յայտարարել է սօցիալիստական կուսակցութիւն: Հարկ ենք համարում անցողակի կերպով հէնց այստեղ ասել, որ միանգամայն սխալվում կամ ստում են այսօրվան դաշնակցական շէֆերը, յայտարարելով թէ Դաշնակցութիւնն էլ իր հիմնաված օրից սօցիալիստական կուսակցութիւն է եղել: Դրան ապացոյց կարող ենք ասել այն, որ Դաշնակցութեան ու չնչ. կուսակցութեան միմեանց հետ չը միանալու առաջին և ամենազիշաւոր պատճառը հէնց այս վերջինի ծրագրի մէջ եղած սօցիալիզմն է եղել: Դրա մասին բաւական ընդարձակ բանակցութիւններ կան այդ երկու կուսակցութիւնների արխիւններում էլ, որոնցով կարելի է ստուգել մեր տաճածը: Ճիշտ է, Դաշնակցութեան հիմնակիրների մէջ 2—3 «նարօդնիկներ» կային, բայց դրանք էլ իրանց ընկերներից ազգւելով՝ հետզհետէ աւելի ու աւելի թունդ ազգայնականներ դարձան: Բացի դրանից, Դաշնակցութեան հակասոցիալիստ լինելը ապացուցանող և մի ամբողջ գրականութիւն կայ. այդ նախ այն «Թռուցիկ»-ի ու «Դրօշակ»-ի ՆՆ-ն են, որ, ինչպէս ասացինք, լոյս են տե-

սել մերթ ընդ մերթ մինչև 1894 թւականը, ապա «Հնչակի» ու «Դրօշակի» հէնց այդ 94 թւականի Նոնսերը, որոնք լիքն են սօցիալիզմի մասին մղված բանակուներով։ Սակայն վերագառնաք գեռ Հնչ, կուսակցութեանը։

Ասացինք, որ այդ կուսակցութիւնը հէնց իր երեսն գալու օրից իրան սօցիալիստական է յայտարարել։ Եւ յիշաւի, հայկական կեանքում, եթէ չենք սխալվում, այդ կուսակցութիւնը առաջինն է եղել որ թէօրիապէս զբաղվել է սօցիալիստական խնդիրներով, ու մի քանի թարգմանական և ինքնուրոյն բրօշիւրներով հիմք է գըել սօցիալիստական մամուլի և գրականութեան։ Սակայն այդ բոլորը եղել է համեմատարար շատ սահմանափակ չափերով և այն էլ միմիայն թէօրիապէս։ Իսկ իրական կեանքի մէջ, գործունէութեան բուն ասպարէդում, ամենաթունդ սօցիալիստ հնչակեանն էլ շրջապատող պայմանների ու հանգամանքների շնորհով, ամենապարզ նացիօնալիստ յեղափոխական էր դառնում։ Իսկ սօցիալիզմից ամենաշատը մնում էր միայն գեմօկրատիզմը, որի ամենագլխաւոր արտայայտութիւնը նրա մէջ էր կայանում, որ այդ կուսակցութիւնը մի քանի փորձեր արեց թուրք ժողովրդին և նամանաւանդ քիւրդ աշխըթներին էլ շահագոգուել յեղափոխական շարժումներով ընդդէմ «բռնապետական ըէժիմի», որի փոխարէն պիտի հաստատէր «նայկական ռամկավարական» կառավարութիւն։ Այդ փորձերն էլ սակայն միանգամայն անաջող դուրս եկան. դրանց հեղինակները ձերբակալվեցին թուրքերի ու քիւրդերի ձեռքով և, մի լաւ ձեծվելուց յետոյ, կառավարութեան ձեռքը յանձնվեցին։

Բայց այդ հանգամանքը բոլորովին չէր կասեցնում հընչակեանների եռանդը, նրանք մի առանձին նշանակութիւն չէին տալիս իրանց՝ հրապարակի վրա բոլորովին միայնակ լինելուն։ Եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ հնչակեանները առողջինչ էին համարում օսմանիան պետութեան զինուրական ոյժը, ոչ թէ նրանք մեծ վստանութիւն ունէին իրանց ոյժի ու զօրութեան վրա, բոլորովին ոչ, նրանք շատ

լաւ հասկանում էին, որ եթէ նոյնիսկ ամբողջ Տաճկաստանում եղած բոլոր հայերն էլ կազմակերպված ու զինված ճակատամարտի գուրս զան օսմանիան կառավարութեան դէմ, այնուամենայնիւ յաղթովը դարձեալ այս վերջինը կը լինի, որտինեակ կուսող ոյժերը չափազանց անհաւասար էին ու կուելու պայմաններն էլ հայերի համար միանգամայն աննպաստ։ Բայց, տեսէք որ, այդ բոլորը շատ լաւ հասկանալով հանդերձ, հնչակեանները մաղաչափ անգամ չէին վհատում իրանց անաշողութիւններից և անվեհերութեամբ շարունակում էին, թէկուզ բոլորովին միայնակ, կոիւ մղել թէ կառավարութեան և թէ նոյնիսկ քիւրդ աշխեթների դէմ։

Ի՞նչն էր, ուրեմն, նրանց այդ աստիճան յանդուզն դարձնում, ի՞նչ յոյսերով ու հաւատալիքներով էին ղեկավարվում ոչ միայն հնչակեանները, այլ և ամբողջ հայութիւնը այդ ժամանակներում։ Ահա հէնց այս հարցերի տակն է թաղված ամենամեծ շան գլուխը։

Այդ՝ Դաւիթիեան յանդգնութիւն ներշնչող միակ յոյն ու ապաւէնը, ինչպէս բոլորին էլ յայտնի է, եւրօպական «միծ» պետութիւնների միջամտութեան խնդիրն էր։ Եւ դա ոչ թէ մի լոկ յոյս էր, այլ մի իսկական հաւատ, մի խոր համոզում, որի դէմ կասկած յայտնողը քարկոծելու արժանի մի հերետիկոս կարող էր համարվել։ Թէկ այս էլ ասելու է, որ այդ ժամանակներում (նոյնիսկ մինչև վերջերս էլ) այդ մասին իսկի կասկած յայտնող էլ չը կար։ Եւ իսկապէս, ինչպէս կարելի էր կասկածել չէ՞ որ բոլոր պատմական փաստերն ու հէնց ինքը թերլինի դաշնագրի 61-դ յօդուածը անհերքելի գրաւականներ էին։ Միթէ Բալկանեան թերակղզու մեղ նման փոքրիկ ազգերը միայնակ էին իրանց ազատութիւնը ձեռք բերել, միթէ հէնց այդ մեծ պետութիւնները չէին, որ, թէկուզ հէնց իրանց սեփական շահերի տեսակետով զեկավարվելով, օգնութեան էին հասել Յունաստանին, Բուլղարիային և այլոց ու անկախութիւն պարզեց նրանց։ Իսկ փոքրիկ ազգերից և ոչ մէկը իր ազատագրա-

կան շարժումներից առաջ 61-րդ յօդւածի նման մի հաստատ երաշխաւորութիւն չէր էլ ունեցել: «Հետևապէս,—մտածում էինք մենք բոլորս այն ժամանակ, —հայերս այդ տեսակէտից շատ աւելի լաւ պայմանների մէջ ենք գտնվում. մենք աւելի ևս վստահ պիտի լինենք, որ պետութիւնները կը միջամտեն մեր գատին: Խոկ եթէ մինչեւ այժմ դրանցից և ոչ մէկը չէ մտածել միջամտելու, դա պարզապէս նրա համար է, որ մենք մինչեւ օրս այդ պետութիւններին «փայտէ շերեփով» ենք դիմել, այնինչ յոյներն ու բոլզարները արիւնոտ սրերեն ցոյց տուել: Երբ մենք էլ ցոյց տոմնը եւրօպացիներին, թէ մենք ևս գիտենք աղատութեան համար մարտնչել, այն ժամանակ նրանք էլ միջամտելու առիթ կունենան և թիւրք կառավարութեանը կը սանձահալեն»:

«Եւ պետութիւնները անպատճառ պիտի միջամտեն մեր դատին, —շարունակում էին այդ ընդհանուր «հաւատաթքը» մասնաւորապէս հնչակեանները — ոչ թէ մարդասիրական զգացումներից, այլ պարզապէս իրանց սեպհական շահերից զրդված, ուստի բոլորովին հարկաւոր չէ և միանգամյան անմտութիւն է եւրօպացիներին աղերսանքներով դիմելու: Հետևապէս բոլորովին նշանակութիւնից ու արժէքից զուրկ են թէ եւրօպական լեզուներով թերթեր հրատարակելու (այն ժամանակ լօնգոնում հրատարակվում էին Բրուսալիի «Haistastan»-ը և պ. Մ. Զերապի «L'Armenie»-ն), և զանազան միտինգներ սարքելը»:

Ճիշտ էին արդեօք մտածում հնչակեանները թէ սխալ — զրա մասին չէ այժմ մեր խօսքը: Սակայն այսչափ կարող ենք մենք պնդել, որ «մեծ» պետութիւնների միջամտութեան խնդրի վերաբերեալ ոչ մի տարածայնութիւն չը կար հնչակեանների և ոչ-հնչակեանների միջև. այդ բանը, ինչպէս ասացինք, մի շատ անքակտելի հաւատ ու անհերքելի համոզում էր դատել այն ժամանակներում ամբողջ երկրագնդի վրա ապրող բոլոր հայերի, նամանաւանդ ինտելիգենտ հայերի համար: Եւ հէնց այդ համոզումն ու այդ հա-

ւատն էին այնպիսի յանդկնութիւն ներշնչում հնչակեաններին ու զօրավիր հանդիսանում նրանց:

Ճշմարտութիւն է և այն, որ այդ բոլոր յոյսերը, հաւատն ու համոզումը, 1896 թւականին գառն իրականութեան մերկ ժայռերին զարնվելով, փշրվեցին, խորտակվեցին, իրանց փլատակների տակ ամբողջ 300 հազար հայերի դիմուններ թողնելով:

Եւրօպական պետութիւնները չը միջամտեցին, նրանք «դաւաճանեցին»: Բայց չէ որ արգէն սկսվել էր միջամտութիւնը, չէ որ հէնց այդ պետութիւնների ձեռքով մշակվեցին Մայիսեան բէֆօրմները: Ի՞նչու յանկարծ երես զարձրեցին հայերից, ի՞նչու չը շարունակեցին իրանց սկսած գործը և, Պիղատոսի նման, հայերին «մեծ մարդասապանի» ձեռքը մատնեցին: Ո՞վ էր մեղաւորը, ում յանցանքն էր այս բոլորը:

Ահաւասիկ այս ու սրա նման մի շարք հարցեր էին, որ մեխի նման միմեանց յետեկից ցցվում էին այն ընդհանուր յուսախափութեան ու վհատութեան ժամանակ իւրաքանչիւր հայի զլիսում: Բայց այդ մեխերը նամանաւանդ մի մի ժահրու վէրք էին բանում հնչակեանների յոգնած ուղեղում ու ցաւատանչ սրտում, որովհետեւ իրապէս նրանք էին յայտնվում այդ ամբողջ ազէտների սկզբնապատճառը և 300 հազար հայերի կոտորածը նրանց խղճի վրա էր զլիսաւորապէս ծանրանում: Շատ բնական է, ասացինք, ուրեմն, որ ամենից առաջ և ամենից աւելի հէնց հնչակեան կուսակցութիւնը զբաղվէր վերոզրեալ հարցերով ու ինքն իրան հաշիւտար իր երկարամեայ գործունէութեան մասին: Անշուշտ խոշոր սխաներ տեղի ունեցած պիտի լինէին, որ «գործը» այդպիսի գժբաղդ վախճան ունեցաւ: Պէտք էր, ուրեմն, գանել այդ սխաները, օգտվել անցեալի գառն փորձերից ու նոր մեթոդներ, գործունէութեան նոր եղանակ մշակել և ապա նորից հրատարակ գուրս գալ «գործը» շարունակելու: Չէ որ հարցը վերջացած չէր, չէ որ հայկական գատը ոչ միայն լուծում չէր սատցել այլ և աւելի էր կնճռոտվել:

ի՞նչ անելու էր, ի՞նչպէս գործելու, ի՞նչպէս վարվելու էր այսուհետեւ, ահա դարձեալ նոր հարցեր, որ վալիս յաջորդում էին վերօդքեալ առաջին հարցումներին:

Եւ Հնչ. կուսակցութիւնը այդ նոյն 1896 թ. իր համագումարում փորձեց զբաղվել այդ խնդիրներով: Սակայն վէրքը այն աստիճան խորունկ ու թարմ էր, խնդիրները այն աստիճան կնճռոտ, որ նրանց լուծելը համագումարի ոյժերից միանդամայն վեր էին: Միակ բանը, որ ցերեկվայ պէս պարզ էր ամենքի համար, այն էր, որ գործունէութեան հին եղանակով, հին մեթօդներով ու հին ձևերով այլևս անհնարին ու միանդամայն կորսատաքեր էր շարունակելը: Անհրաժեշտ է նոր մեթօդ, նոր եղանակ մշակել գործունէութեան համար, ասում ու կրկնում էին ամենքը: Բայց թէ իսկապէս ի՞նչի մէջ պիտի կայանար այդ նոր մեթօդը ու գործունէութեան նոր եղանակը, այդ մասին ոչ ոք չէր կարողանում մի պարզ ու որոշ ծրագիր ներկայացնել: Միակ բանը, որ կարողանում էին ընդգծել այդ խրնդրի վերաբերեալ, այն էր, թէ մի անդամ ընդմիշտ պիտի թողնել մասնակի ցոյցեր և շարժումներ անելու գաղափարը և պէտք է ընդհանուր ապստամբութեան պատրաստել ժողովուրդը: Այլպէս ասելով, նրանք կարծում էին, թէ արդին ամեն բան ասել ու վերջացրել են ու թէ այդ ամենազլխաւոր և էական հարցն էլ արդէն լուծված է, մոռանալով ու զանցառութեան տալով այն ամենահիմնական հարցը, թէ արդեօք որ աստիճան հնարաւոր կարող էր լինել հայ ժողովրդին ընդհանուր ապստամբութեան պատրաստելը այդչափ մեծ դժբաղութիւնից յետոյ և թէ, որ աւելի զլխաւորն է, կարելի էր յոյս ունենալ, թէ դիցուք Թիւրքիայի բոլոր հայերը, մի անդամից ապստամբելով, պիտի աջողէին օսմանեան լուծը թօթափել, եթէ ոչ՝ նորից պէտք էր պետութիւնների միջամտութեան վրա յոյս դնել զլխաւորաբար:

Պէտք է խոստովանել որ այն ժամանակ խնդրի այդ ամենաէական կողմով հնչակեան համագումարում ոչ ոք չէ

էլ լրջութեամբ զբաղվել: եւրօպական միջամտութեան ֆէտիշը այն աստիճան սուրբ ու նուիրական էր ամենքի համար էր, նա այնչափ սիրելի էր իւրաքանչիւրի սրտին ու այնքան խորն էր թափանցիկ իւրաքանչիւրի ուղեղի մէջ, որ նոյնիսկ սրբազնութիւն կը համարվէր նրան ուղեղից շարժելը: Ժողովականներին այդ ֆէտիշից աւելի զբաղեցրել էր այն հարցը, թէ ինչու «մէծ» պետութիւնները անսպասելի կերպով երես դարձրեցին հայկական գատից: Եւ նրանց մի ահազին մասը եկել էր այն տղայամիտ եզրակացութեանը, թէ զրա պատճառը միմիայն այն է եղել, որ Հնչ. կուսակցութիւնը իր ծրագրով սօցիալիստական է համարվել, որ եւրօպացինների համար նոյնն է, թէ նիհիլիստ կամ անիշխանական, ուստի և նրանք չէին կարող այդպիսի մի ընդհանուր անարգանքին արժանացած կուսակցութեան ձեռքով վարած գատին հովանաւորութիւն ցոյց տալ: Այլ խօսքերով՝ հայ ժողովրդի ամբողջ դժբաղութեան ու հայկական գատի անաջող ելքի ամենազլխաւոր պատճառը սօցիալիզմն է Լողել, ուրեմն և գործի ամբողջ պատասխանաւորութիւնն ու յանցանքն էլ կուսակցութեան հիմնադիրների վրա է ընկնում, որոնք ուսւահայեր և Թիւրքիայի ժողովրդին ու պայմաններին անծանօթ լինելով, վերցրել այնպիսի ծրագիր և մշակել, որի շնորհով փոխանակ հայ ժողովրդի յօնքը շինելու, նրա աչքն էլ հանվեց:

Ահա հէնց այդտեղից էլ զլխաւորաբար սկսվում են Հնչ. կուսակցութեան ներքին պատակառումները, առուր ու զըմբացը, որոնք վերջանում են այդ կուսակցութեան երկու մասի բաժանվելով, բայց և որոնք շարունակվում են ամբողջ 6—7 տարիներից աւելի և ջլատում ու բնորովին քայլքայում են բաժանված երկու ֆրակցիաներին էլ: Հէնց այդ ընդհանուր բէակցիայի, Հնչ. կուսակցութեան այդ ամենախիստ երկպառակումների ժամանակ է, որ վերջապէս Դաշնակցութիւնը հարպարակ է նետպում և ակտիվ գործունէութիւն է սկսում Տաճկատանում:

IV.

Այսպէս ուրիշն, Տաճկաստանի յեղափոխական գործունէութեան ասպարէզում Դաշնակցութիւնը իրավէս հրապարակ է զալիս 1896 թւականին, մի թւական, որը իսկապէս ոչ թէ գործելու, այլ շատ աւելի զինադադարի տարի եւ, ինչպէս մէր յօդուածի նախորդ գլխում ասացինք, մեծ տէսութիւնների պիտասոսական անսպասէի վարմոնքը և միմէանց ետեից օրը ցերեկով սիստեմատիքաբար կատարված անհաւատապի կոտորածները այնպիսի սոսկալի ու ճնշող ազդեցութիւն էին արել ամբողջ հայութեան և նաև մանաւանդ Տաճկաստանում ապրող ու սոսկումներին ակտնատես եղած ժողովրդի վրա, որ այդպիսի ընդհանուր վհատութեան ժամանակներում մի որ և է լուրջ յեղափոխական շարժում առաջ բերելու մասին յուսան ու մտածելը աւելի քան անմտութիւն էր:

Սակայն անարդարութիւն կը լինի մէր կողմից ասելը, թէ Դաշնակցութիւնը, իր յեղափոխական գործունէութեան գէրիւաը—նախ Բանկ-Օտոմանի վրա յարձակվելը և ապա կանասօրի հոչակաւար արշաւանքը—սկսելով, մտածում էր մի որևէ լուրջ շարժում առաջ բերել Թիւրքիայում: Բոլորով ինքն ոչ, նրան այդ տեղ հետաքրքրող միակ կարեւոր կէտը պարզապէս այն էր, թէ «չէ՞ որ հարկաւոր է, որ, վերջապէս Դաշնակցութիւնն էլ իր գոյութիւնը ցոյց այց և ապացուցանի, թէ ինքն էլ է գործում»:

Ճիշտ այս արգումենտով էր որոշվել Խանասօրի արշաւանքը կատարելու հարցը և այդ իմաստով էր մեծամասնութիւնը պատասխանել, այդ հարցի մասին վերջնական վճիռ կայացնելու համար գումարված ժողովում, այն մի բանի աւելի լրջամիտներին, որոնք այդ արշաւանքը չափագանց անմիտ և վատանգաւոր քայլ էին համարել:

Պէտք է, վերջապէս, ապացուցանել, որ Դաշնակցութիւնն էլ է գործում, —ահա միակ միաբը, միակ իսթանը,

որ հիմք ծառայեց Դաշնակցութեան հրապարակ նետվելուն, եւ անհրաժեշտ էր այդ ապացոյցը շուտով տալ քանի որ Հնչ. կուսակցութիւնը իր քայլքայման ու կազմալուծման փակիսի մէջ էր գտնվում և գեռ չէր կարողացել նորից իր ոյժերը ամփոփել ու իր նախկին զօրաւոր գիրքը լանել «գործի» ասպարէզում: Եւ հէնց դրա համար էլ անհրաժեշտ էր յարմար առիթից լաւ օգտվել՝ մի կողմից աւելի մեծ չափերով ու համարձակութեամբ ջանալ բոլորովին վարկարեկ անելու այդ «անիծված» կուսակցութիւնը, իսկ միւս կողմից հասարակութեանը ցոյց տալ, թէ ահա կայ մի այլ կուսակցութիւն, որը կարող է կործանվող կուսակցութեան տեղը բռնել և աւելի լաւ կերպով փոխարինել նրան: Կարծես թէ հէնց այդ նպաստակի համար էլ ճիշտ այդ թւականներում, մէկը միւսի ետեից լոյս են տեսնում Դաշնակցութեան մի քանի կիսապաշտօնական թերթեր էլ,—«Շարժումը» Բուլղարիայում, «Հայրենիքը» Ամերիկայում, —որոնք, գլխաւոր օրգան «Իրօշակի» հետ մի ընդհանուր համերգ կազմելով, մի կողմից անասելի փչոցներով փառարանում, երկինք են բարձրացնում Դաշնակցութեան նոյնիսկ չը կատարած «հերոսական» գործերը, —ինչպէս օրինակ Խանասօրում ցեղապետ Շաքիր-աղային սպանված ու զէնքերն անդամ խլած հոչակելը, որի, սակայն, քիթն անգամ չէին արհնեցրել, —իսկ միւս կողմից խիստ կերպով քննադատում և բոլորովին առ ոչինչ յայտարարում հնչակեանների ամբողջ գործունէութիւնը և, որ ամենից գլխաւորն է, հազար ու մի նոյնիսկ իրանց չը հաւատացած զրպարատութիւններով, բամբասանքներով ու հնարովի այլանդակութիւններով անուանարկում, անովերջ անուանարկում և ցեխի հետ հաւատարեցնում Հնչ. կուսակցութեան գործունէութեան մասին արված քննադատութեան (մի կողմ թողնելով այս ու այն անհատի մասին տարածած բամբասանքներն ու հնարովի

Այդ Հնչ. կուսակցութեան գործունէութեան մասին արված քննադատութեան (մի կողմ թողնելով այս ու այն անհատի մասին տարածած բամբասանքներն ու հնարովի

դրաբարտութիւնները) ամենածիծագելի ու մազալու կողմը այն էր, որ Դաշնակցութիւնը իր ամբողջ գործունէութեամբ, իր գործելու ու այդ մասին մտածելու եղանակներով ոչ միայն մազաշափ չէր տարբերվում հնչակեաններից, այլ ընդհակառակը, կարծես թէ քայլ առ քայլ հետևում էր սըրանց ու գնում շարունակ սրանց գծած շաւզով:

Մեր նպատակից, ի հարկէ, գուրս է Դաշնակցութեան ամբողջ գործունէութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով այստեղ քննադատութեան ենթարկելը, բայց ընդհանուր գծերով մենք կարող ենք ասել այն, որ

1) Դաշնակցութիւնը նոյնպէս Թիւրքիայում աղատ և անկախ Հայաստան ստեղծելու մասին էր երազում, ինչպէս և Հնչ. կուսակցութիւնը:

2) Դաշնակցութիւնը նոյնպէս անգիտակցարար հաւատում էր, թէ պիտի կարելի լինի քիւրդ և թիւրք ժողովուրդներին էլ շահագրգուել «ազատ Հայաստան» ստեղծելու նպատակով մղված յեղափոխական շարժումներով, ինչպէս և Հնչ. կուսակցութիւնը:

3) Դաշնակցութիւնն էլ նոյն Բերլինի դաշնագրի դըքազգ 61-րդ յօդուածի վրա յենվելով էր փայփայում իր ցնորամիտ երազները, ինչպէս և Հնչ. կուսակցութիւնը:

4) Դաշնակցութիւնն էլ նոյն Զերմեռանդ հաւատն էր տածում դէպի այն մեծ ու բոլոր հայկական աղէտների պատճառ եղող Փետիշը, որ «մեծ» պետութիւնների միջամտութեան անունն է կրում, ինչպէս և Հնչ. կուսակցութիւնը:

Դաշնակցականները, իրանց մամուլի ու բանաւոր քարոզների ժամանակ նոյնպէս սաստիկ գէմ էին եւրօպական պետութիւններին դիմելուն, նրանց աղերսաղբեր ներկայացնելուն և առնասարակ եւրօպացիների մէջ հայերի օգտինպրօ պագանդ անելուն, հնչակեանների նման այն միաքը յայտնելով, թէ եւրօպական պետութիւնները ոչ թէ մարդասիրական զգացումներից դրդված պիտի միջամտեն հայկական դատին,

այլ միմիայն իրանց սեփական շահերից դրդված: Եւ հէնց գրահամար էլ՝ Դաշնակցութիւնը որչափ հալածել է խեղճ Մինաս Զերագին իր «Արտել» թերթով հանդերձ: Բայց հէնց նոյն Դաշնակցութեան ջանքերով Պարփառմ ստեղծվեց «ՊՅՈ Արմենիա» թերթը, որը նոյն դերն էր կատարում, ինչ որ և պ. Զերագի թերթը, և նոյն Դաշնակցութիւնն էր, որ երկու հսկութագուսների ու իրանց մի «ընկերի» ձեռքով աղերսաղբեր ուղարկել տուեց մեծ պետութիւններին:

5) Դաշնակցութիւնն էլ նոյն մասնակի ցոյցերի ու հրոսակային խմբերի սիստէմով է վարում «գործը», ինչպէս և Հնչակ. կուսակցութիւնը:

Ինչպէս տեսնում էք, և ոչ մի տարբերութիւն չը կարայի երկու կուսակցութիւնների գործունէութեան ու տածած երազների միջև:

Այստեղ էլ միակ տարբերութիւնը այն էր, որ ինչպէս տեսանը, Հնչ. կուս. լինելով առաջինը «գործի» մէջ և իրրեկարապես այդ գործի, աւելի շատ իրաւունք ունէր հասարակութեան և պատմութեան առաջ արգարանալու իր արած սխալների, հայ ժողովրդի գլխին ակամայից բերած չարիքների համար, քան Դաշնակցութիւնը, որը, հրապարակ գալով աւելի ուշ և իր աչքի առաջ ունենալով հնչակեանների մի քանի տարվան կատարած գործունէութեան փորձերը, մազաշափ անդամ ուշադրութիւն չը գարձեց եղած փորձերի վրա ու բոլորովին չը մտածեց դասեր առնել և օգտվել այդ փորձերից: Այդ իսկ հանդամները բաւական է, որ պատմութիւնը իր անողոք դատավճիռը կարդայ Դաշնակցութեան վարիչների գլխին:

Բայց սրանք ժամանակ չունէին ոչ պատմութեան, ոչ նրա դատավճարի մասին մտածելու ու ոչ էլ իրանց նոխորդների արած սխալների մասին երկար ու բարակ խորհելու: Ինչպէս ասացինք, նրանց համար մի ահակ լոգունդ էր դառնել այն միտքը, թէ «պէտք է գործունէութիւն ցոյց տալ»: Եւ նրանք ամբողջ տասը տարբայ ընթացքում ցոյց տուեցին այդ գործունէութիւնը, գործունէութիւն, որը

ընդհանուր առմամբ կարելի է մի շաբթ հրավառութիւն (փետրվեր) անուանել:

Իսկապէս պէտք է խոստովանել, որ հրավառութեան, ժողովրդի աչքերը զանազան գոյնի լոյսերով ու «ֆրշանդ-ներով» կուրութեան աստիճանի շացնելու գործը մի չը տեսնած կատարելակործութեան էին հասցըել Դաշնակցութեան զեկավարները: Մարդիկ օր ցերեկով, առանց քաշվելու ու այնպիսի յանդկնութեամբ էին սուում, հնարում, չեղածը եղած համարում, իսկ եղածը չափազանցնում, լուն ուղաշինում և ձանձը փիղ ներկայացնում, որ դիմացինը այլևս համարձակութիւնը չէր ունենում մի որևէ կասկած յայտնելու: Բաւական է այստեղ յիշել այն բոլորը, ինչ որ Դաշնակցութիւնը տարիների ընթացքում ասել, զրել ու պատմել էր Բանկ-Օտոմանի գէպքի մասին, ու այդ բոլորը համեմատել այն՝ այդ նոյն գէպքի մասին արված անպահոյց պատմուածքի հետ, որ վերջերս միայն արեց գէպքի ականատեսներից մէկը 1906 թ. «Մշակ»-ի № 217-ում:

Այդ գեռ մի գէպքն է միայն: Իսկ ով չէ յիշում և ինչ ասել այն բոլոր բանաւոր ու գրաւոր պատմութիւններին, որ մի ժամանակ աշխարհ թնդեցրին Խանասօրի արշաւանքի վերաբերեալ, արշաւանք, որը, իր անմտութեամբ ու անհեթեթութեամբ հանդերձ, թէ ահազին գումարներ նասեց հայ հասարակութեան վրա և թէ եօթ հայկական գիւղերի հիմնայատակ լինելու և բազմաթիւ հայ կտրիների կորստեան պատճառ եղաւ: Իսկ ի՞նչ ասել նոյնպէս այն փչոցներին, որ Սասունում գործող «քաշերը» նախ իրը Սասունն էին զրաւել, Տալզօրիկի լեռների վրա ազատութեան դրօշակը պարզել, իսկ յետոյ էլ վան քաշարին էին տիրապետել: Եւ այդ փչոցներով, այդ կարգի մի շաբթ հրավառութիւնը նախ իր Դաշնակցութիւնը համանաւանդ շատ խիստ չեշտվում էր 1896 թ.-ից յետոյ, այսինքն՝ այն օրվանից իվեր, երբ Դաշնակցութիւնը հրապարակ եկաւ: Հնչ. կուսակցութեան աւերակների վրա իր թագաւորութիւնը հաստատելու: Մասսամբ էլ Դաշնակցութիւնը իր շուտափոյթ գորեղանալովը հէնց այդ հանգամանքին էր պարտական, ոլովինեան, ինչպէս նախորդ զլուխներում տեսանք, հայկական հարցի անաջող ելքը և պետութիւնների պիղատոսական վարմունքը հնչակեանների ոցիալիստութեանն էին վերագրում չատերը: Պարզ է, ուրեմն, որ այդպիսի տրամարանութեամբ մտածողների կարծիքով, Դաշնակցութեան գործունէութեան շարունակ հաւատարիմ մնալով իր «գործունէութիւն ցոյց տալու» լօգունդին...

Իսկ այդ «գործ ցոյց տալը» չափազանց թանկ նստեց

և քրաղզ թիւրքահայերին, աւելացնելով նրանց նահատակների թիւը մի քանի տասնեակ հազարներով ու կատարեալ դարձնելով նրանց անտեսական քայլայումն ու մնանկութիւնը:

Շատ բնական է, որ հրավառութիւններով ու առաւելական պատմութիւններով անկարելի էր անվերջ «գործ» շարունակել: Զէս որ ամեն բան, վերջապէս, իր չափն ու սահմանը ունի, մարդիկ կարող են խարպել յուսալ և հաւատալ, իսկ մի օր էլ վերջապէս սթափվել ու զգալ իրանց յուսախարշութիւնը: Այս խիստ հիասթափութիւնն ու վհատութիւնը, որոնց մէջ ընկել էր 1896 թ. Հնչ. կուսակցութիւնը, անպատճառ և շատ բնական կերպով մէկ օր էլ պէտք է Դաշնակցութեան չարքերին տիրապետէր, որովհետեւ, ինչպէս ասացինք, նրանք երկուսն էլ միենոյն ուղիով էին ընթանում, զործունէութեան միենոյն մեթօդներով ու մտածումներով էին զեկավարվում, և բոլորովին միենոյն հոգի վրա էին կանգնած: Մենք ասացինք, որ այդ երկու կուսակցութիւնների միջն և ոչ մի տարբերութիւն չը կարբաց գա բոլորովին էլ ճիշտ չէ. կար մի տարբերութիւն, և այդ այն էր, որ Հնչ. կուսակցութիւնը ճանաչված էր իբրև սօցիալիստական, այսինչ Դաշնակցութիւնը, ինչպէս վերեւում էլ տեսանք, հէնց իր հիմնված օրից կատաղի հակառակորդ էր հանդիսացել այդ վարդապետութեանը: Եւ այդ հակառակութիւնը նամանաւանդ շատ խիստ չեշտվում էր 1896 թ.-ից յետոյ, այսինքն՝ այն օրվանից իվեր, երբ Դաշնակցութիւնը հրապարակ եկաւ: Հնչ. կուսակցութեան աւերակների վրա իր թագաւորութիւնը հաստատելու: Մասսամբ էլ Դաշնակցութիւնը իր շուտափոյթ գորեղանալովը հէնց այդ հանգամանքին էր պարտական, ոլովինեան, ինչպէս նախորդ զլուխներում տեսանք, հայկական հարցի անաջող ելքը և պետութիւնների պիղատոսական վարմունքը հնչակեանների ոցիալիստութեանն էին վերագրում չատերը: Պարզ է, ուրեմն, որ այդպիսի տրամարանութեամբ մտածողների կարծիքով, Դաշնակցութեան գործունէութեան շրջանում պետութիւնները շատ աւելի չուտ պիտի միջա-

մտէին հայկական հարցին ու դրական լուծում պիտի տային: Բայց հակառակ այդ բոլոր յոյսերի ու մոտածումների, ճիշտ հակառակը դուրս եկաւ. Հնչակեան գործունէութիւնը, իրրե հետեանք, դեռ էլի մայիսեան ըեփօրմների թղթի կտորը ունեցաւ, այնինչ Դաշնակցութեան օրով՝ ոչ միայն պետութիւնները ոչ մի միջամտութիւն ցոյց չը տուեցին, այլև նոյնիսկ ուղարկված եակիսկոպոս պատուիրակները չընդունվեցին նրանց կողմից:

Չատ բնական է, ասում ենք, որ Դաշնակցութիւնն էլ նոյն հիսութափութեան ու յուսախարութեան մէջ պիտի ընկնէր մի օր, ինչպէս որ ընկել էլ էր Հնչ. կուսակցութիւնը 1896 թւականին: Եւ դա լինելու էր, անշուշտ, այն օրը, երբ նա էլ իր նախորդների նման բոլոր միջոցները անձամբ փորձած ու իր սխալ քեալլագիօվական գործունէութեան բոլոր դառն պատուղները վայելած:

Եւ յիրաւի, այդ հիսութափութիւնն ու դրան յաջորդող ներքին պառակտումը երեան եկաւ հէնց այն օրը, երբ Դաշնակցութիւնը իր վերջին յուսահատ փամփուշալ նետեց: Այդ փամփուշտը Անդրանիկի վերջին յուսահատական փորձն էր մի կողմից և մեծ պետութիւնների դռները բաղիւլու համար ուղարկված պատզամաւորութիւնն էր միւս կողմից: Ինչպէս գիտենք, այդ երկուսն էլ կատարեալ անաջողութեան հանդիպեցին. Անդրանիկը դուրս եկաւ «Երկրից», իսկ պատզամաւորութիւնն էլ միմիայն փակ դռների ու չափազանց սառը պատասխանների հանդիպեց:

Դա արդէն, ասում ենք, վերջին յուսահատ փամփուշան էր, որին անմիջապէս յաջորդեց հիսութափութեան յուսահատ ճիչը և բողոքի աղաղակը հէնց Դաշնակցութեան շարքերից ու նրա զեկավարների գէմ: Այդ առաջին բողոքը դուրս եկաւ անցեալ 1905 թ. Բուլգարիայի Վարնա քաղաքից և իսկոյն արձագանք դտաւ Ռումինիայում, Եզիպառում, Ամերիկայում և այլ համարեալ թէ բոլոր տեղերում պառակտումը սկսվեց, նման այն պառակտումների, որ տեղի էին ունեցել 1896 թ. հնչակեանների շարքերում: Եւ այդ

սկսված ներքին պառակտումը, անշուշտ, Դաշնակցութեանն էլ նոյն գրութեանը պիտի հասցնէր, ինչ գրութեան որ հասել էր Հնչ. կուսակցութիւնը. եթէ մի բոլորովին անսպասելի ու պատահական հանգամանք չը դար նրան փրկելու: Այդ հանգամանքը կովկասում սկսված աղէտալի հայ-թուրքական ընդհարումներն էին, որոնք լոյս ընկան ճիշտ այն ժամանակ, երբ Փաշնակցութեան մէջ պառակտումը նոր էր սկսվել և որոնք հայ ժողովրդի տնտեսական քայլայման ու արեան գնով փրկեցին Դաշնակցութիւնը իր կատարեալ ու վերջնական քայլայտմից:

Հայ-թուրքական ընդհարումներով մի նոր գարեշրջան բացվեց Դաշնակցութեան համար:

V.

Հայ-թուրքական ընդհարումները այնպիսի անակնկալ կերպով պայլթեցին և իրանցից մի այնպիսի անսպասելի ու սոսկալի աղէտ էին ներկայացնում, որ մի անգամից կարծիս թէ բոլորովին մոռացութեան արվեց Տաճկաստանի «հայկական գաւը»: Այդ իսկ պատճառով էր շատ բնական էր, որ այդ դատի չուրջը գարձող հիսութափութիւնն ու սրանից առաջ եկած պառակտումը Դաշնակցութեան շարքերի մէջ, կարծես թէ, հէնց իր սկզբում խեղդվեց: Ամբողջ հայութեան ուշագրաւթիւնը յանկարծ Մասիսի այն կողմից անցաւ գէպի այս կողմը: Այլևս ժամանակ չը կար Տաճկահայաստանի մասին մտածելու, անհրաժեշտ էր շուտափոյթ օգնութիւն հասցնել անդրկովկասի այրվող գիւղերին ու քաղաքներին:

Ոչ միայն կովկասի, այլ նոյնիսկ Բուլգարիայի և այլ տեղերի դաշնակցականներն էր ուր, ինչպէս ասացինք, ամենից առաջ էին սկսել բողոքի ձայներ լսվել Դաշնակցութեան վարիչների գէմ, ստիպված էին մի առժամանակ իրանց ձայները կտրել ու լուռթիւն պահպանել: Մի խօսքով՝ Դաշնակցութիւնը հայ-թուրքական ընդհարումների շնորհով փրկված էր ներքին պառակտումներից ու քայլայումից:

Աւելին կասենք. նա ոչ միայն փրկված էր, այլ և վե-

բակենդանութիւն ստացաւ և տեհի ևս զօրեղացաւ կովկասում:

Մինչ այն ժամանակ, քանի որ Դաշնակցութեան և այլ կուսակցութիւնների գործունէութիւնը այնակը, հեռու, Տաճկաստանի հոգի վրա էր, Կովկասի հայը, նամանաւանդ նրա ունենոր գասակարգը՝ արդիւնագործական և վաճառականական բուրժուազիան չսփազանց անտարելք էր գեղի այդ գործունէութիւնը: Եւ դա չատ բնական ու հասկանալի է. Նորարարուղջ արդիւնագործ ու չարչի բուրժուան ամեն բանի մէջ միշտ «նազգն» է սիրում: Նա իր ձեռքից երեք լուրլիանոցը բաց է թողնում այն ժամանակ միայն, երբ դիմացինի ձեռքում հինգ բուրլիանոցի ծայրն է նկատում: Ազգասլրութիւնն ու բարեգործութիւնն էլ այդ կարգի բուրժուազիայի համար բոլորովին օտար և անհասկանալի բաներ են: Ճիշտ այդ է պատճառը, որ մէր Կովկասեան բուրժուազիան համարեա թէ ոչ մի համակրութիւն ու օգնութիւն չը ցոյց տուեց գեղի «հայկական դատը»: Իսկ եթէ նա երրեմն-երրեմն մի քանի զրոջներ էր նետում այդ դատի համար աշխատողներին, դա էլ պարզապէս իրան դիմուղ «բարեկամի» խաթթը չը կուրելու, այդ բարեկամներից չը տախատվելու համար էր անում ըստ մեծի մասին: Ճիշտ էնց գրանով նոյնպէս կարելի է բացարձել և այն, որ Դաշնակցականները նիւթական ապահովութեան կողմից հաշնամատարար շատ տեկի մեծ աջողութիւն ունեին Կովկասում, քան հնչակեանները, որոնցից և ոչ մէկը բուրժուարարեկամ» կամ «ինսամի» չունէր այս կողմերում:

Սակայն ինդիբը բոլորովին այլ կերպարանք ստացաւ հայ-թուրքական ընդհարութմների ժամանակ: Այստեղ արդէն այդ նոյն բուրժուայի սեփական շահերն ու սեփական կաշին էին վտանգի մէջ: Նա այժմ այլես ոչ միայն չէր կարող անսարքեր մնալ, ոչ միայն պիտի սպասէր, որ գային իրան խնդրելու, այլ ընդհակառակը, ինքն էր այս անզամ շտապում երէկփայ իր արհամարհած գաշնակցականների մօտ, նրանց առաջ լայն բանալով իր գրապանները ու առաջ

իսուսումներ անհեռվ յետադպայի համար։ Միայն թէ նրանք լաւ կազմակերպէին ու լաւ տանէին «ինընազաշտպանութեան» գործը ու փրկէին նրան անխռուսափելի մնանկութիւնից։

Այդ գեռ բուական չէ. իր սեփական կաշուի վախից մեր բուրդուան այն աստիճանին հասաւ, որ իր համար այլ ևս պատիւ էր համարում Դաշնակցութեան «գութարի» մէջ զրել տալ իր անունը, և դաշնակցական «տղերքը» այլ ևս նրա համար էլ «մեր տղերքը» դարձան:

Դաշնակցութիւնը կատարեալ ցնծութեան մէջ էր, ևս ուղղակի «եղ ու մեղքի մէջ լըվավում էր»: Աւսենալով իր տրամադրութեան տակ նիւթական ահազին միջոցներ և իր շարքերում անդրկողկեասի համարեալ թէ ամբողջ հայերին, ևս ինքնարերարար դադարեց այլ ևս կոռակեցութիւն լինելուց: ևս այժմ հայկական կառավարութիւն էր, այս վերջինին յատուկ իր բոլոր հաստատութիւններով, ինչպէս են՝ գտարանը, բանտը, ոստիկանութիւնը, բարձր ու ստորին ագմինիստարացիան, զօրքը, ուսումնարանները, հարկանութիւնը և այլն, որոնց սազմերը գոյութիւն ունեին գեռ հայթուրբական ընդհարութեանից առաջ էր:

Գաշնակցութիւն անունը կրող հայկական կառավարութիւնը մի շատ հաւատարիմ պատճէնն էր ոռւս բիւրօկրատիական կառավարութեան, այն կառավարութեան, որը գոյութիւն ունէր մինչև ոռւս-հապօնական պատերազմը, երբ բանապետութիւնը իր ամբողջ ոյժի մէջ էր: Նոյն բլունութիւնները, նոյն անհամբերատարութիւնը դէպի իրանց հակառակորդները, նոյն հալածանքը խօսքի ու մամուլի դէմ, մի խօսքով՝ ֆօն Պէկէի բէժիմը փոխազրկել ու շարունակվում էր հայկական կեանքի մէջ, մինչդեռ նա արդէն բառական թեթեացել էր Ռուսաստանում:

Այդ երկու բիւրօկը ստիլան կառավարութիւնների միջև եղած տարբերութիւնը այն էր միայն, որ ոռուսականը շատ աւելի շիտակ ու հաւելողական էր իր զարմունքների, խօսքի ու գործունէութեան մէջ, քան հայկականը։ Սա ա-

մենից առաջ վարվելով ու գործելով իրեն մի խոկական կառավարութիւն, երբէք չէր դադարում իրան կուսակցութիւն անուանել և այն էլ անպատճառ «աշխատաւոր մասսանիր» շահերը պաշտպանող մի կուսակցութիւն։ Բացի դրանից, իր ամբողջ էութեամբ լինելով ամենախիստ բրանապետական բիւրօկրատիա, նա չէր դադարում թէ մամուլում և թէ ժողովներում շարունակ հազար ու մի տեսակ ազատութիւնների անունից խօսել։ Լինելով ամենավատ տեսակի շովինիստ, նա միշտ կաշուից դուրս էր դալիս իրան սօցիալիստ և ինտերնացիօնալ ներկայացնելու, և այլն, և այլն։

Սակայն մի կողմ թողնենք Դաշնակցութեան ինչ տեսակի հայկական կառավարութիւն լինելու խնդիրը ու նրանով այս վերջին տարվայ ընթացքում կատարած՝ ամեն տեսակ խայտառակութիւնները, բռնութիւններն ու «գուլումները», որոնց մասին շատ է զրվել ու գեռ շարունակում է զրվել հայ մամուլի մէջ և որոնք, ի հարկէ, պակաս պատճառներ չէին հայ ժողովրդի բոլոր շերտերին էլ զրդեցնելու, նրանից երես դարձնելու ու Դաշնակցութեանը քայլացման ենթարկելու։ Ենթադրենք մի րօպէ, որ այդ բոլոր «քաջագործութիւնները» բոլորովին տեղի չունենային և Դաշնակցութիւնը մնար մի որոշ բարոյական բարձրութեան վրա կանգնած։ Այդ պարագայում պիտի կարողանար արդիօք նա երկար գոյութիւն ունենալ նախ՝ իրեն հայկական կառավարութիւն։

Առաջին անգամից այս հարցումը փոքր ինչ ծիծաղելի է թւում, բայց չէ որ, ինչպէս զիտենք, Դաշնակցութիւնը իրապէս իրան մի կառավարութիւն էր զգում և մինչև իսկ տղայամիտ յանդկնութիւն ունեցաւ իր համար մի տեսակ պարլամենտ էլ ստեղծել։ Ենթադրենք նոյն իսկ մի րօպէ, որ ոռու կառավարութիւնը բոլորովին իր աշքերը փակէր ու թոյլ տար Դաշնակցութեանը մշտական պարլամենտ էլ ունենալ, միայն թէ նա սեպարատիստական ունագութիւններ չանէր և հայերը մնային Ռուսաստանի նոյն միապետական բէժիմի

տակ։ Կրկնում ենք, այսպիսի նոյն իսկ բոլորովին անհաւատալի ու անթոյլատրելի պայմանների տակ անգամ, Դաշնակցութիւնը պիտի կարողանար իր գոյութիւնը նոյնութեամբ պահպանել հայ-թուրքական ընդհարումները վերջանալուց յետոյ։

Այդ հարցի պատասխանը ինքնըստինքեան շատ պարզ է, քանի որ, ինչպէս ասացինք, Դաշնակցութեան գորանալու ու հայկական կառավարութիւն դառնալու միակ պատճառը հէնց այդ ընդհարումների սպառնալիքներն էին։ Իսկ դրանց վերանալովը ինքնըստինքեան կորչում էր և Դաշնակցութեան հմայքը, ուստի և նա պիտի անպատճառ զըրկվէր այն լիառատ ու ինքնայօժար տուրքերից, որոնցով նա իր զօրքը, գատարանները և այլ կառավարչական հիմնարկութիւններն էր պահպանում, իսկ սրանց միջոցով էլ իրան այնպէս ուժեղ և զօրաւոր էր զգում։

Եւ յիրաւի, ի՞նչպէս կարելի է ենթադրել որ միենոյն ժողովուրդը ցանկանայ և հնարաւորութիւն ունենայ միաժամանակ երկու միւնքոյն տեսակի կառավարչական հիմնարկութիւններ պահել ու երկու տեղ պետական հարկ և տուրք վճարել։ Իսկ հայ ժողովուրդը կովկասում միշտ այդպիսի կացութեան մէջ էր ընկել այս վերջին աւելի քան մի տարվայ ընթացքում։

Կրկնում ենք, մի կողմ թողնելով նոյն իսկ այն բոլոր ենիշարական քաջագործութիւնները, որ կատարել ու կատարում է դեռ Դաշնակցութիւնը, և որոնց շնորհիւ ժողովրդային ըողովի ու զայրոյթի անազին ցասում բարձրացաւ այդ կուսակցութեան դէմ, ենթադրելով մի րօպէ, որ Դաշնակցութիւնը չափազանց կօրբեկո լինէր իր գործունէութեան մէջ ու շատ վայելուչ պահէր իրան, այնուամենայնիւ, ասում ենք, նա սաստիկ պիտի տկարանար կովկասում, հէնց որ հայ-թուրքական ընդհարումները մեզմանալ սկսէին։

Եւ հէնց այդպէս էլ եղաւ, նա իր շարքերից կորցրեց այն բոլոր տարբերը, կովկասի հայերի այն ահագին լազ-

մութիւնը, սրոնք Դաշնակցութեան մէջ էին մտել միմիայն և միմիայն ինքնապաշտպանութեան բնագրից դըրդված։ Թէև այդ տարրերի հեռանալովն ու դրանց համակրութիւնը կորցնելովը Դաշնակցութիւնը նիւթական ահազին աղբիւներից էր զրկվում, տկարանում և վաղարում էր այլև հայկական կառավարութիւն լինելուց, բայց և այնպէս ոտքու չարիքների փոքրագոյնը կարող էր համարվել, եթէ միայն Դաշնակցութիւնը կարողանար իր ամքողջութիւնը պահպանել գէթ իրբե մի «հօմօժէն», միատարր կուսակցութիւն։ Բայց Դաշնակցութեան ամենաթոյլ, ամենախխուտ կողմը հէնց նրա չափազանց բազմատարբութիւնը, «հետերօժէն» լինելն է, որը և այդ կուսակցութեան համար ամենատրավիքական դրութիւն է ստեղծել, որի ջնորհիւ էլ նա աէտք է անխուսափելիօրէն տարրալուծման ու քայլայման ենթարկվի իրբե կուսակցութիւն։

ինչպէս երկում է, այդ հանգամանքը վերջերս սկսել են, վերջապէս, հասկանալ և հէնց իրանք շէֆերն էլ որոնց ամենակարող ու ամենալաւ պատրաստականութիւնն ունեցող համարված թէօրիստիկները այժմ սկսել են «Երկրի» էջերում հազար ու մի տեսակ սովետական բազմազունի քաջըռուկներով, իրանց կուսակցութեան բազմատարրութիւնն ու ամբողջ «սումբուրը» բոլոր սօցիալստական կուսակցութիւնների զգին փաթաթել ու, այդպիսով, մի տեսակ սիստէմի վերածել ամեն տեսակ քաօս, ամեն մի «սումբուր», հաւատացնելով թէ իրանց և թէ իրանց միամիտ հետեւողներին, որ Դաշնակցութեան մէջ զոյտութիւնն ունեցող ամբողջ քաօսն ու խառնափնթորութիւնը մի տեսակ անխուսափելիութիւնն է ամեն մի քաղաքական նոյն իսկ սօցիալստական կուսակցութեան համար:

Բայց թողնելոք առ այժմ մի կողմ Դաշնակցութեան այդ բազմատարբութեան ու քաօսի ինպիրը, որ, ինչպէս յայտնի է, լոյս աշխարհ եկաւ ու զգալի դարձաւ Ռուսաստանի ընդհանուր ազատազրական շարժումների շնորհով

միայն։ Վերցնենք դարձեալ Դաշնակցութեան համար ամենանպաստաւոր պայմանը և ենթագրենք մի բառէ, թէ Ռուսաստանի յեղափոխական շարժումները չը լինեին ու Դաշնակցութեան առաջ դրված լինելը միմիայն Տաճկաստանի «Հայկական դատը», որի համար էլ ինչպէս գիտենք, ծնունդ էր ստացել Դաշնակցութիւնը։

Արդ՝ կարող էր արգելօք Պաշնակցութիւնը խաղաղութեամբ, առանց պառակտումների, առանց բաժանումների անցկացնել այն կրիզիսը, որի մէջ նա ընկել էր Տաճկաստանում իր մօմ 8—9 տարի ունեցած ապարդիւն զործունէութիւնից յիսոյ:

Նախորդ զլուխներում մենք ասացինք, որ այդ նոյն կրիպտոի մէջ ընկաւ Հնչակեան կուսակցութիւնը գեռ 1896 թուականին ու հէնց այդ կրիպտոին էլ նա զոհ գնաց, անկարող հանդիսանալով այդ նոյն հայկական դատի համար մի այնպիսի նոր զործունէութեան եղանակ, մեթօդ ու տակտիկա մշակել, որով նա կարողանար թէ այդ դատին և թէ իրան՝ կուսակցութեանը վերակենդանութիւն ու թարմութիւն տալ: Եւ այդ կուսակցութիւնը, հակառակ իր բոլոր ջանքերին ու մկանաձգութիւններին, նախ պառակտվեց, մասերի բաժանվեց և վերջի վերջու մին մոռացվեց... զոհն համար:

Նոյնպէս ասացինք, որ ճիշտ միենոյն բէկացիան, մի-
ենոյն անխուսափելի կրթիքսը Դաշնակցութեան շէմքին չո-
քեց, երբ սա էլ իր վերջին փամփուշտը նետեց՝ Ասդրանի-
կի միջոցով Տաճկաստանում և եպիսկոպոսական պատգա-
մաւորութեան միջոցով Եւրօպայում։ Այդ կրթիքիսի անխու-
սափելի հետեանքը եղող առաջին ճիշն ու բողոքի ազազա-
կը, ասացինք, առաջին անգամ լսից Բուլղարիայից, որը
իսկոյն արձագանք գտաւ Ամերիկայում, Եղիպատում և այլ
վայրերում ու նա սպանում էր մի ահագին ներքին պա-
ռակառնմերի փոխվել, նման Հնչ. կուսակցութեան մէջ տե-
ղի ունեցած պառակտումներին։ Բայց այդ ժամանակ, ինչ-
պէս ասացինք, վրա հասան մեր երկրի աղետաբեր հայ-

թուրքական լնդհարումները ու մի առժամանակ խեղդեցին ամեն մի բողոք, ամեն մի պառակտում:

Վերջացան լնդհարումները և «ազատ Հայաստանի» տենչով ապրած ու այդ դատի համար տարիներով տառապած գաշնակցականների առաջ նորից ծառայաւ այդ նոյն հարցը իր բոլոր նպաստաւոր ու աննպաստ կողմերով:

«Ի՞նչպէս անելու է հայկական հարցի հետ, ինչու նա այսպիսի գժրադդ ելք ունեցաւ, ով էր մեղաւորը. միթէ սիալ գործեցինք, միթէ սիալ հիմքերով էինք ղեկավարվում, թէ ոչ՝ գործունէութեան եղանակը ճիշտ էր, բայց մեզ ղեկավարողները իրանց գիրքի բարձրութեան վրա չէին կանգնած: Ի՞նչ անելու է, ի՞նչպէս գործելու է այսուհետեւ շարունակելու է արդեօք գործունէութեան նոյն հին եղանակը, թէ ոչ՝ գործունէութեան նոր մեթօդ, նոր տաքտիկա մշակելու է»:

Ահաւասիկ այս ու սրանց նման մի շարք հարցեր են միմեանց յետեկից ցըցվում գաշնակցականների առաջ, որոնք պարզ, շիտակ, մանրամասն ու լուրջ պատասխանների են սպասում իրանց «ամենակարող» շէֆերից:

Ի՞նչպէս ասացինք, այս նոյն հարտապ հարցերն էին զբաղեցնում և հնչակեաններին սրանից տաս տարի առաջ, որոնց հետեանքը եղաւ պատակտումն ու բաժանումը, և այն՝ իր մէջ ոչինչ չը պարունակող ընդհանուրի պատասխանը, թէ՝ այլևս պէտք է վերջ դնել մասնակի շարժումներին ու պէտք է զինել Տաճկաստանի բոլոր հայերին և պատրաստել նրանց լնդհանուր պատամբութեան համար:

Այդպիսի եզրակացութեան եկան, տառմ ենք, հիասթափած ու յուսահատութիւնից գլուխները կսրցրած հնչակեանները իրանց 7—8 տարվան յախումն գործունէութիւնից յետոյ:

Իսկ ի՞նչ եզրակացութեան են եկել նոյնպէս և դեռ շատ արելի յուսախար եղած գաշնակցականները: Ի՞նչ պատասխան տուեցին սրանց շէֆերը վերոյիշեալ հրատապ հարցե-

րին: Գտան արգեօք սրանք այն թալիսմանը, որ չէին կարուցացել գտնել հնչակեանները և որով կարելի պիտի լինի լուծել այդ՝ բոլոր կնձոսոտ հարցերից ամենակնձոսոտ «հայկական» հարցը:

VII.

Դաշնակցութիւնը ոչ միայն թալիսման չը գտաւ. «հայկական դատը» լուծելու համար, ոչ միայն գործունէութեան նոր մեթօդ ու նոր եղանակներ չը մշակեց, այլ և այդ խճանդրին ըստ իր հինաւուրց սովորութեան լրջութեամբ էլ չը վերաբերվեց: Պ. պ. շէֆերը չափազանց ուրախ էին, որ ճիշտ այդ ընդհանուր լրման ու կուսակցութեան մէջ տիրած կրիպտի ժամանակ հայ-թուրքական լնդհարումները պայմանական, որոնք կարծես թէ միանգամայն մոռացնել աղւեցին «հայկական դատը»: Նրանք ենթադրում էին, թէ հայ հասարակութիւնը և թէ նամանաւանդ իրանց կուսակցութեան շարքերը, հետզետէ գրաւվերով նախ հայ-թուրքական լնդհարումներով և ատպա լնդհանուր Ռուսաստանի ազատազրական շարժումներով, այն աստիճան կը խրվին այդ գործերի մէջ, որ կամաց-կամաց նոյնիսկ կը մոռանան «հայկական դատի» գոյութիւնը: Այդպիսով ի հարկէ.—շէֆերի կարծիքով,—թէ Գաշնակցութիւնը ընդմիշտ կաղամազէրին պառակտումներից ու բաժանումներից և թէ ոչ ոք էլ իրաւունք չէր ունենայ կասկածելու, թէ Գաշնակցութիւնը այլ ևս իր դաւթարը կորցրել է «հայկական դատի» վերաբերեալ ու շուարած չը գիտէ, թէ ի՞նչ անելու է այնտեղ:

Եւ որպէսզի այդպիսի կասկածները բոլորովին փառատված լինեն, որպէսզի ոչ ոք, նամանաւանդ տաճկահայ գաշնակցականները չը տրանջան շէֆերի վրա ու չասեն, թէ սրանք «դաւաճաննել են» թիւրքահայերին ու բոլորովին

լքել են նրանց սրտին ամենամօտիկ խնդիրը, պ. պ. շէֆերը, փորձված դիվլոմատների նման, երբէք չէին մոռանում իրանց թերթերում մի-մի անգամ տաք յօդւածներ նուիրել «հայկական դատին» ու թիւրքահայերին հետաքրքրող հարցերին, ամեն անգամ միշտ ջանալով հաւատացնել, թէ Դաշնակցութիւնը չէ մոռացել հայկակական դատն ու թիւրքահայերին, թէ նա գեռ շարունակում է մտածել այդ խնդիրների մասին։ Եւ որպէսզի այդ հաւատադիացումը աւելի գօրաւոր և էֆեկտաւոր լինի, նրանք հէնց այս տարի առանձին խնամքով ու շուրջով մի շարք հոգեհանգիստներ ու տարեղարձներ կատարեցին Տաճկաստանում հահատակված հետոնների համար։

Բայց, ի հարկէ, բոլորովին այլ խնդիր է մի որևէ հարց չը մոռանալը ու նրա մասին մտածելը և այլ խնդիր է այդ հարցի մասին մի որևէ դրական գործ կամ ձեռնարկութիւն կատարելը։ Որոնեցէք Դաշնակցութեան լուր թերթերի մէջ էլ, և գուրք ոչ մի առող չէք զանի այն մասին, թէ արդիօք Դաշնակցութիւնն ի՞նչ է անում կամ ի՞նչ է մտածում անել Տաճկաստանում։ Ֆակէլ է արդիօք նա գործութեան մի նոր մեթօգ, մի նոր եղանակ, թէ ոչ՝ շարունակում է զարձեալ իր հին եղանակով գործել, ի՞նչ հաւատալիքներ ու յօյսեր ունի այժմ նա այդ գժրաղղ դատի վերաբերեալ, ի՞նչ կարելի է և ի՞նչ պէտք է անել այսուհետեւ։

Կրկնում ենք, այս ու այս կարգի հարցումներին դուք ի գուրք մի լուրջ պատասխան կամ տեսութիւն կը փնտուք «Յառաջ-Ալիք-Զանգ-Երկրի» էջերում։ «Տասն ու հինգ տարի հայկական դատի համար մարտնչող ու այդ գործը վարող» Դաշնակցութիւնը այս մի ամբողջ տարգայ ընթացքում և ոչ մի լուրջ ուսումնասիրութիւն չը կատարեց այդ իր համար «չը մոռացված» հարցի նորագոյն ֆազիսի վերաբերեալ ու գէթ իր շարքերին չը պարզեց իր՝ կուսակցութեան կամ գունէ շէֆերի հայեացքներն ու տեսութիւնները։

Այդ մասին շատ տւելի մտածում են շարքերը, այլ ոչ շէֆերը, և, որչափ մեկ յայտնի է, «հայկական հարցի» դե-

րաբերեալ Դաշնակցութեան շարքերում չորս (4) կարգի հայեացքներ կամ կարծիքներ կան։ Դրանցից մէկը, —որի արտայայտողն է Վարնայում հրատարակվող՝ Դաշնակցութեան նորիկին կիսապաշտօնական, իսկ այժմ օպօզիցիա կազմող՝ «Շարժում» թերթը, —կայանում է նրանում, որ ամենախիստ կերպով քննադատում է Դաշնակցութեան անցեալ ամբողջ գործունէութիւնը, համարելով դրան միանգամայն աղէտաբեր ու վասակար հայ ժողովրդի համար, և այդ բոլորի մէջ մեզաղբում է Դաշնակցութեան ղեկավարներին, որոնք համարեալ թէ բոլորն էլ լինելով ուստահայեր և երբէք Տաճկաստան ոտք դրած չը լինելով, ճանաչած և տեղեակ չը լինելով «Երկրի» պայմաններին, հանգամանքներին և այն, միշտ հետուից են ղեկավարել «Գործը» ու դրա շնորհով էլ կրակի ու սրի են մատնել (ի հարկէ ակամայից) ամբողջ «Երկրերը»։

Թէկ ամբողջ տարիների ընթացքում «Շարժումը», ինչպէս ասացինք, Դաշնակցութեան կիսապաշտօնական թերթը լինելով, միշտ ձ և Դաշնակցութիւնն ինքն էլ էր շարունակ զօրավիր հանդիսանում այդ՝ իր այժմհան քննադատած՝ գործունէութեանը և հազար ու մի տեսակ ըեկամներ անում այդ՝ իր այսօրվան մեղաղբած՝ ղեկավարներին, բայց նաև «Շարժումի» խմբագիր պ. Վարդօն այժմ իրան արգարացնում է նրանով, որ ի՞նքը երբէք «ղեկավարների» թւում չէ եղել ու միշտ «Ներքուստ» մաքառելիս է եղել նրանց ղէմ։

Շատ բան կարելի էր, ի հարկէ, ասել այդ «Ներքուստ» մաքառելու մասին, բայց այժմ մեզ զրադեցող հարցը ոչ «Շարժումն» է և ոչ էլ նրա խմբագիր պ. Վարդօն, որը, ի միջի այլոց ասենք, դատապարտելով «ղեկավարներին»՝ չէ աշխատում խուսափել և իրան բաժին հասանելիք պատասխանատութիւնից։ Մեր այժմ զրադեցնողն, ասում ենք, Դաշնակցութեան շարքերի մէջ տիրող հայեացքներն են «հայկական հարցի» վերաբերեալ որոնցից մէկի արտայայտողը պ. Վարդօն է իր «Շարժում» թերթով, և որը, նոյնպէս ի միջի այլոց ասենք, իր համարձակ ու անվախ քննադատու-

թիւնների և մերկացումների պատճառով, ահա մի ամբողջ տարուց աւելի է, սոսկալի հալածանքների է ենթարկվում իր հակառակորդ գաշնակցականների կողմից, որոնք իրանց հալածանքը մինչև իսկ սպանութեան փորձի հասցրեցին սրանից մի քանի շաբաթ առաջ:

Դաշնակցութեան անցեալ գործունէութիւնը քննադաշտելով պ. Վարդօն, սակայն, իր կողմից գործունէութեան մի նոր մեթօդ կամ մի նոր եղանակ չէ առաջարկում: Նրա փոքր ի շատէ ուշադրութեան արժանի առաջարկը այն է, որ ասում է, թէ «գործի» վարիչները չպէտք է շարունակ հեռում նատած լինեն և պէտք է «երկրի» պայմաններին ու հանգամանքներին շատ մօտիկից ծանօթ ու տեղեակ անձնաւորութիւններ լինեն: Ինչ վերաբերում է անցեալ գործունէութեան բուն քննադատութեանը, պէտք է ասել, որ այդ էլ շատ վայր ի վերոյ է կատարված ու անկարելի է այդ քննադատութիւնը իրու ելակէտ վերցնել, գործունէութեան նոր եղանակներ մշակելու համար: Պ, Վարդօն ոչ թէ հին գործունէութեան ամենահիմնական հայեացքներն է սխալ համարում, ոչ թէ Դաշնակցութեան ծրագրի հիմնական կետերն ու «Հայկական հարցը» ինչ եղանակով լուծելու մասին եղած ընդհանուր կարծիքներն ու համոզումներն է քննադատում, այլ շատ աւելի այդ հայեացքները, ձևերն ու եղանակը գործադրողներին է մեզադրում, ենթադրելով որ եթէ այդ նոյն եղանակներով ու միջոցներով «գործը» զեկավարվէր այլ մարդկանց ձեռքով, նա այդպիսի կորստարեր ու դժբաղդ վախճան չէր կարող ունենալ:

Այս է Դաշնակցութեան շաբաթերի մէջ ննրկայումս «Հայկական հարցի» կամ Տաճկաստանի գործունէութեան մասին եղած հայեացքներից կամ ուղղութիւններից մէկը:

Երկրորդ ուղղութիւնը կովկասցիներին աւելի ծանօթ է. դա, այսպէս կոչված, միհրանականութիւնն է:

Միհրանականները, ինչպէս յայտնի է «Մշակում» լոյս ահսած մի շաբաթ յօդուածներից, բոլորովին չեն քննադատում Դաշնակցութեան անցեալ գործունէութիւնը և ոչ էլ մեղա-

դրում են «զեկավարներին», սրանց անցեալում գործերը վատ վարելու համար:

Ամբողջ մեղադրանքը միհրականների կողմից չէֆերի վերաբերեալ կայանում է նրա մէջ, որ շատ իրաւացի կերպով ասում են, թէ այդ շէֆերը շեղվել են Դաշնակցութեան սկզբնական նպատակից, որ նրանք արդէն իրապէս ոչինչ չեն անում ու մատադիր էլ չեն անելու «Հայկական դատի» համար, որ նրանք, իրանց գործունէութեան ասպարէզը տեղափոխելով կովկաս, մոռացութեան են տուել իրանց՝ տաճկահայերի՝ սրտին մօտիկ խնդիրը, բայց և կեղծաւորութեամբ չեն ուզում համարձակարար խոսափանվել այդ բանը ու շարունակում են շահագործել թէ Դաշնակցութեան անունը, թէ գրա սկզբնական նպատակի համար նահատակվածների յիշատակները և թէ Կովկասում ապրող այն բոլոր հայերին, որոնց սրտին շատ աւելի մօտ է «Հայաստանի ազատութիւնը», քան պրօֆեսիօնալ միութիւններն ու նոյնիսկ Ռուսաստանի ազատագրական շաբաթումները:

«Մենք բոլորովին դէմ չենք և մեզ համար իրաւունք էլ չենք համարում դէմ լինելու, — ասում են միհրանականները, — որ Կովկասի հայերը և գաշնակցականներից յանկացողները իրանց ազատագրական գործով զբաղվեն, պրօֆեսիօնալ միութիւններ կազմակերպեն ու թէկուզ հազար տեսակ ծրագրեր ու նախագծեր մշակեն իրանց տեղական գործունէութեան համար, բայց այդ պարագայում նրանք իրաւունք չունեն իրանց բոլորովին նոր գործունէութիւնը, նոր նպատակներն ու նոր ծրագրերը Դաշնակցութեան բարուրի մէջ փաթթել: Այդպիսիները պարտաւոր են գուրս գալ Դաշնակցութեան շաբաթերից ու իրանց համար թող նոր անուն, նոր ֆիրմա ստեղծեն, թողնելով որ Դաշնակցութիւնը հիր հին գործունէութիւնը շարունակի և իր սկզբնական նըստատակի իրագործմանը ձգտի:

Ահա այս է միհրանականների ամբողջ վէճի ամփոփումը, որի հիմնական կէտերի հետ մենք միանգամայն համաձայն ենք, թէկ մենք այդ ուղղութիւնը Դաշնակցութեան համար:

ամենասպանողական թեր ենք համարում և իրանց՝ միջ-
րանականներին էլ ամենայետազդիմական տարր:

Միհրանականների հետ համաձայն ենք այն տեսակէ-
տով, որ մենք առհասարակ սաստիկ դէմ ենք: մի ձեռքով
երկու ձմերուկ բռնէլու և միաժամանակ երկու աթոռների
վրա նստելու սիստեմին: Մի ձեռքով երկու ձմերուկ բռնող
մարդը, որչափ էլ նա բուռն ցանկութիւն ունենայ նրանց
երկուսին էլ սադ սալամաթ տեղ հասցնելու, գարձեալ չէ
կարող, և ձմերուկներից մէկն ու մէկն անպատճառ վայր
կը գլորփի ու կը ջախջախփի: Խոկ քաղաքական խնդիրների
մէջ երկու աթոռի վրա միաժամանակ նստելը միշտ առաջ է
գալիս երկու բոլորովին ոչ-ցանկալի ու չափազանց տգեղ
հանգամանքներից, այն է՝ կամ երր մէկը այն ստափան
ագէտ ու բորբիկ է հասարակական, քաղաքական ու սօցիա-
լական հարցերի վերաբերեալ, որ նա անկարող է հանդիսա-
նում երկու միմեանցից բոլորովին տարբեր ու միմեանց
հակադիր սկզբունքներն ու ուղղութիւնները իրարից ջոկել
և կամ թէ՛ նա, այդ տարբերութիւնները լաւ հասկանալով
հանդերձ, չը հասկանալ է ձևացնում և խորամանկ Պօղոս
տոռաքեալի նման աշխատում է թէ սագուկեցիներին շահա-
գործել և թէ փարիսեցիներին: Ինչ էլ լինի, համաձայնեցէք,
որ այս երկու դրութիւնն էլ բոլորովին նախանձելի չեն:

իսկ Դաշնակցութեան ամենապահպանողական թեն ենք համարում միհրանականներին այն պարզ պատճառով, որ նրանք, որչափ կարողացել ենք հասկանալ, բոլորսին կողմանից են մնացել Դաշնակցութեան անցեալ գործունէութեան բոլոր հին ձեւերին, ուղղութեանը, միջոցներին ու մեթօդին, շարունակելով հաւատալ որ «եթէ հին գործունէութիւնը աւելի մեծ չափերի մէջ ու աւելի հաստատ հիմքերի վրա դրվի, յաջողութիւնն էլ կատարեալ կը լինի»:

«Օրինակի համար, —ասում են նրանք, —անցեալում, թէև Դաշնակցութեան ծրագրի մէջ կար, որ պէտք է քիւրդ ցեղերի հետ միանալ ու նրանց էլ մասնակից անել թիւրքիայի ցեղափոխական շարժումներին, բայց այդ մասին

պէտք եղած ջանքերը գործ չը կրվեցին, քիւրդ բէզերի հետ
բանակցութիւնները լաւ չը տարվեցին և այլն և այլն»:

Քիւզերի հետ միանալու կամ, աւելի ճիշտ է ասել
քիւզերին հայերի հետ միացնելու և «հայկական» յեղափո-
խութեամբ շահագրգուելու հարցը, ինչպէս յայտնի է, թէ
հնչակեանների և թէ դաշնակցականների ծրագիրներում ա-
մենանշանաւոր մեխերից մէկն է եղել: Ուստի անկարեւոր չենք
համարում այդ հարցի մասին մի քանի խօսք ասել այսակ:

Այդ միութեան կարելիութիւնն ու հաւանականութիւնը առնասարակ հիմնված է այն՝ գուցէ և շատ իրաւացի՝ իրովսութեան վրա, որ քիւրդերը ընդհանրապէս իրանց շատ աւելի մօտ են զգում հայերին, քան թիւրքերին։ «Քիւրդերը շատ հայկական սովորութիւններ ունեն, — ասում են միշտ և ամեն ժամանակ այդ խնդրի մասին խօսք եղած միջոցին։ — Նրանք հայերի հետ շատ աւելի մօտ բարեկամութիւն են սիրում անել քան թիւրքերի հետ։ Նրանք հայոց սրբավայրերը ուխտ են գնում, հայերի ձեռվ են խմոր հոնգում» և այլն և այլն։

Ահա այս ու այսպիսի մի շաբք առարկութիւններն են այն հիմունքները, որոնց շնորհիւ քիւրդ ըէգերն ու նրանց ցեղակիցները պիտի համաձայնն իրանց «Փլլա» (ձորա) հայերի հետ միանալու և տապալիլու. այն կառավարչական բժիշմը, որը միջոց ու դիւրութիւն է տալիս քիւրզին իր ներկայ գէօդարական կիսանկախ կեանքով ապրելու և միշտ հայ «Փրայանել» ունենալու:

Ճիշտ է, քիւրգերը դեռ քաղաքակրթութեան «բարբարաց» շրջանում գտնվող ժողովուրդ են, ուստի և քաղաքական ու հասարակական խնդիրների վերաբերեալ միանգամյան տգէտ կարող են լինել բայց և այնպէս այդ հանգամանքը դեռ ևս ոչ ոքի իրաւունք չէ կարող տալ ենթադրելու, որ քիւրգերը իրանց ամենակարճ խելքով իսկ, թէկուզ իրանց բնագգովն անզամ, չը կարողանան ըմբռնել ու հասկանալ, որ ներկայ տաճկական բէժիմը գէպի լաւը փոփօխվելուն ու այդ երկրում օրինաւոր և բարեկարգ (մեր հասկա-

ցողութեան իմաստով) կառավարութիւն հաստատվելուն պէս իրանք պիտի զրկեն իրանց՝ ներկայումս վայելած՝ ասպետական անկախութիւնից ու ազատութիւններից: Քաղաքակրթութիւնն ու օրինական կառավարութիւնը, ի հարկէ, շատ լաւ բաներ են, բայց... ոչ ամենքի համար, որչափ որ ձուկը պարզ ջուր է վիճուռում ու վճիռ ծովերի և գետերի մէջ է սիրում ապրել, այնպէս էլ կան և այլ կենդանիներ, որոնք հոտած ճահճաներն են գերադասում ու ճահճաների մէջ են աւելի մնունդ առնում և զօրանում: Միթէ Ռուսաստանի խոշոր կալուածատէր ազնւականութիւնն ու վրաց իշխանները և կովկասի թուրք բէգերը նոյն այդ կարգի կենդանիներից չեն, որոնք ատամներ են կրծտեցնում ազատազրական շարժումների դէմ և իրանց կեանքի կէսը կը տային, եթէ ճնարաւորութիւն լինէր հին, նոյն իսկ 60-ական թւականներից առաջ գոյութիւն ունեցող, բէժիմին և տիրապետող ֆէօդալական կարգերին վերադասնալ: Եւ միթէ քիւրդ բէգերը գրանցից նուազ գիտակցութիւն ունեն իրանց տնտեսական ու սօցիալական շահերի մասին, որպէս զի հայերին օգնէին տապալելու այն կաղնին, որի պառուզներով իրանք ապրում ու լիսուատ մնունդ են ստանում:

Ոչ. մարդկային պատմութեան մէջ գեռ ևս ոչ մի դասակարգ, ոչ մի ժողովրդային խաւ այլպիսի յիմարութիւն չէ արել:

Մենք միանդամայն հաւատում ենք, որ քիւրդերը հայերին աւելի մօտ են զգում իրանց, աւելի են սիրում, քան թիւրքերին: Բայց զա այդպէս է հէնց նրա համար, որ հայը քիւրդի ամենախոնարհ «Փըլլան» է, նրա կաթնատու կոմի է:

Մենք կարծում և հաւատում ենք, որ հայերը իրանց համար կարող են գաշնակիցներ գտնել շատ աւելի շուտ թիւրք ժողովրդի մէջ, քան քիւրդերի, նամանաւանդ սրանց բէգերի ու ցեղապեանների, որոնք կուրտուրական շատ աւելի ստոր աստիճանի վրա են կանգնած և չեն կարող կողմ-

նակիցներ լինել այնպիսի ազատազրական շարժման, որի ամենաառաջին և ամենազլիւաւոր գործերից մէկը ֆէօդալական կարգերի խորակումը պիտի լինի:

Ճիշտ այս տեսակէտով, պ. պ. միհրանականներն ու գրանց նման քիւրդերի մասին զեռ ևս մեծ յոյսեր տածողները չափազանց սխալվում են, ենթազրելով, որ, եթէ «անցեալում աւելի մեծ ջանքեր գործ դրված լինէին, կարելի պիտի լինէր քիւրդ բէգերին էլ շահազրպուկ «հայկական» յեղափոխական շարժումներով, և այն ժամանակ «ազատ Հայաստանի» հարցը վաղուց լուծում ստացած կը լինէր»:

Կրկնում ենք, որ մենք կատարելապէս համաձայն ենք միհրանականների հետ, երբ նրանք Դաշնակցութեան շէֆերից պահանջում են լինել շիտակ ու անկեղծ և երկու աթոռուի վրա չը նատել: Բայց մենք ոչ մի կերպ չենք կարող համաձայննել նրանց հետ, երբ նրանք շարունակում են ուղեւորվել ու պարծենալ Դաշնակցութեան անցեալ՝ բոլորովին անհիմն ու չը կշռագատված գործունէութիւնով՝ որի հետեանքը այն միայն կարող է լինել որ շատ կարճ ժամանակի ընթացքում «Հայաստանը» բոլորովին առանց հայ ժողովրդի կը մնայ:

VII.

«Հայկական հարցի» վերաբերեալ Դաշնակցութեան շարքերի մէջ տիրապետող երրորդ ուղղութիւնը մէնք անտառնում ենք այն մեծ թէ փոքր թւով—այդ չը գիտենք՝ այսպէս կոչված նոր գաշնակցականների հայեացքը, որոնք Տաճկահայաստանի յեղափոխական շարժումներից, ըստ երեւոյթին, բոլորովին հիսաթափված լինելով, նոր միայն նկատել են, որ նա ազգայնական ու բուրժուազական շարժում է, և առաջարկում են՝ թողնել այդ գործի զեկավարութիւնը

ու նրան այսուհետեւ վարելու խնդիրը այդ հարցի մէջ «շահագրգութած» բուրժուանիքին և մասնաւորապէս տաճկահայերին, իսկ Դաշնակցութիւնը մասնակցի միմիայն Ռուսաստանի բնորդանուր ազատագրական շարժումների մէջ:

Դաշնակցութեան մէջ տիրող այս երբուրգ ուղղաւթիւնը, որ սրանից մի քանի ամիս տուած պարզ ու որոշ կերպով ձեւակերպված լոյս տեսաւ «Ժամանակ է սթափւելու» դրբոյ կով, չը պէտք է շփռթել «Երկրականների» կամ իսկական շէֆերի ուղղութեան հետ, որոնք նոյնպէս կովկասեան գործունէութեան «նախագիծն» են ընդունում, բայց և միենոյն ժամանակ չեն ուզում հրաժարվել և Տաճկաստանի գործունէութիւնից, գոնէ այդպէս են ուզում ցոյց տալ իրանք: Մենք այդ երկուորեակ գործունէութեան կողմնակիցներին համարում ենք Դաշնակցութեան մէջ տիրող չօրորոգ ուղղութիւնը, կամ Դաշնակցութեան կենտրօնը, որը, ինքը երկու աթոռների վրա բազմելով, ամեն կերպ աշխատում է փասած թուկերով միմիանց կապել ու հաշտեցնել Դաշնակցութեան աջակողմնան ու ձախակողմեան իրար խիստ հակագիր տարրերը:

Ի հարկէ, զարմանալու ոչինչ չը կայ, որ Դաշնակցութեան շարքերում էլ գուրս եկան մարդիկ, որոնք զգացին ու հասկացան, թէ անկարելի է Կովկասում անտարբեր նստելու շարունակ «ազատ Հայաստանի» մասին երազել, քանի որ այստեղ, ճէնց քիթի տակ ամենանշանաւոր, հազւադիւտ ու մեծ պատմական դէպքեր են կատարվում: Խուսաստանի հըսկայական յեղափոխական շարժումները միմիայն անշունչ առարկաներին չը շարժեցին, հետևաբէս ի՞նչպէս կարող էին նրանք այդ երկրի սահմաններում ապրող՝ ոչ միայն «երիտասարդ», այլև տարիքաւոր՝ գաշնակցականներին անտարբերութեան մէջ թողնել: Բնգհակառակը, զարմանալին այն է, որ «15 տարիքան սօցիալիստ ու յեղափոխական» գաշնակցականներն այս դէպքումն էլ չափականց ուշ մնացին:

Առաջարկած է ազգային շարժումները մասսայական բանականութեական բնաւորութիւն ստացան 1890 թւականնեւ:

րի վերջերում և նրանց ալիքները կովկաս հասան 1900-ա-
կան թւականների սկզբներում։ Մինչ հնչակեանները ճիշտ
այդ ժամանակներում, զնահատելով այդ փրկարար շարժում-
ների էռթինը, ոգեսորված վերակենդանութիւն են ստանում
և, Ա. Նազարեէկի անմիջական խմբագրութիւնն տակ Բուլ-
գարիայում հիմնելով «Վերածնութիւն» թերթը, սկսում են
կովկասի հնչակեան շարքերին և առ հասարակ հայ հասարա-
կութեանը թերագրութիւններ անելու քարոզել այդ շար-
ժումների մէջ դրական ու ակտիվ գործունէութիւն ցոյց տալ,
—ճիշտ այդ ժամանակ, ստում ենք.— ջաղաքատնտեսութեան
ու սօցիօլոգիայի գասախօսութիւն կարգացող գաշնակցական
շէֆերը, ճիշտ դրա հակասակ, իրանց պաշտօնական օրգան-
ներով անվերջ ծաղրում էին «հայ սօցիալիսներին» (հնչա-
կեաններին) և ամեն ջանք գործ էին դնում, որ կովկասեան
հայերը չը խարգեն «ազգային դաւաճաններից» և զգուշա-
նան «անհարազատ» շարժումներին մասնակցելուց։ Այսօր-
վան թունդ սօցիալիստ և միհրանականներին խուլգամներ
անուանող գաշնակցականները սրանից ընդամենը $1\frac{1}{2}$ —2
տարի առաջ անդադար այն միարն էին բարոզում թէ «հա-
յերը այնչափ փոքրաթիւ են Ռուսաստանում, որ այս երկրի
յեղափոխական շարժումներին մասնակցելով՝ միմիայն ընտ-
ջինջ լինել կարող են։ Ռուսաստանի յեղափոխական գործը
առանց հայերի մասնակցութեան էլ շատ լաւ կարող է առաջ
զնալ, ուրեմն ինչո՞ւ մեր ժողովրդի զլուխը ի զուր աեղլ
զտանգի տակ դնենք, քանի որ յեղափոխութեան աջող ել-
քի գէպքում, միհնոյն է, ձեռք բերված ազատութիւններից
հայերն էլ պիտի օգտվեն։ Այդ շարժումներին հայերը չպէտք
է և իրաւունք չունեն մասնակցելու, նամանաւանդ որ մեր
առաջ այժմ մի շատ աւելի մեծ (?:) խնդիր կայ լուծելու,
զա Հայաստանի ազատութեան խնդիրն է։ Իսկ ինչ վերա-
բերում է սօցիալիզմին, մեր «15 տարվան սօցիալիստների»
կարծիքով, զա նոյնն էր, ինչ որ մի չափահաս մարդու մուշ-
տակը 2—3 տարեկան մասնուկի համար...»

պառաժներին զարնվելով, հետզետէ փշրկեցին, և դաշնակցական գիտակից տարբերն էլ ամբողջ մէկ-մէկուկէս տարուց յետոյ սկսեցին նոյն երգերը նուագել ինչ չատ առաջ նուագել էին արդէն հնչակեանները։ Բայց բանը նրանումն է, որ այս գէպքում էլ նրանք չափազանց աղաւաղումների ենթարկեցին այդ արդէն նրգագված երգերը։

Հնակեան գիտակից տարբերը, խիստ տրամարանական կերպով զարդացնելով այդ կուսակցութեան ծրագրի մէջ և-ղած մարքսիստական հայեացքները և նկատի առնելով կովկասի ու Տաճկաստանի իրականութիւնների, դրանց տնտեսական ու սօցիալական պայմանների տարբերութիւնները, նկատի առնելով որ այդ միմեանցից բոլորովին տարբեր վայրելում եղած յեղափոխական շարժումները միմեանցից բոլորովին տարբեր բնաւորութիւն են կըում. մի տեղ զուտ ազգային, իսկ միւս տեղ գտած կարգային հողի վրա, — ի նըկատի առնելով այդ բոլորը, ասում ենք, — նրանք խիստ արրամարանօրէն եկան այն եղբակացութեան, որ այդ երկու խնդիրները անհրաժեշտօրէն պէտք է միմեանցից բաժանել. կովկասեան շարժումներին մասնակցել ցանկացողները պիտի միանան Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցութեան հետ, իսկ Թիւրքիայում աշխատել ցանկացողները պիտի վարեն այդ գործերը առանձին, կանխաւ մշակելով, ի հարկէ, այդ գործունէութեան համար նոր մեթոդ և նոր եղանակներ:

Այդպէս զլեցին խճիրը գիտակից հնչակեանները, և
երբ նրանց առաջարկը չընդունվեց կուսակցութեան մհծա-
մասնութեան կողմից, —որը ձիւա Դաշնակցութեան այսօր-
վան կենարօնը կազմող շէփերի նման կուսակցութեան խառ-
նիճաղանձ ու հետերօժէն ամբողջութիւնը գերազանելով
«գործի» աջողութիւնից և ամեն մի տրամաբանութիւնից՝
ուզեց նոյնպէս երկու աթոռների վրա նստած մնալ և մի
ձեռքով երկու ձմերուկ լրոնել, —նրանք, թողնելով մեռելնե-
րին իրանց մեռելները թագելու, գուրս եկան խմբերով Հըն-
չակեան կուսակցութիւնից և միացան Ռուսաստանի սօց-
դէմ. բան. կուսակցութեան հետ:

Իսկ ի՞նչպէս են դրել հարցը և ի՞նչպէս են վարկում «պիտակիյ» կամ «նոր» դաշնակցականները:

Սրանք, ինչպէս ասացինք, «հայկական գատը» համար բուժութեազական ձգտութելի արտայայտութիւն և այդ գատի համար եղած շարժութելը բուրժուազական, որոնց մէջ գասակարգային հողի վրա կանգնած սօցիալիստը չէ կարող մասնակցութիւն ունենալ, միենոյն ժամանակ շատ տրամաբանորէն դատելով, այդ դատի համար ծնունդ առացած և «15 տարի գոյութիւն ունեցող» Դաշնակցութիւնը համարելով բուրժուազական կազմակերպութիւն, այդ «սօցիալիստ» ու «գիտակակից» դաշնակցականները, փոխանակ նոյնպէս տրամաբանորէն զգուանքով գուրս նետվելու այդ կուսակցութիւնից և գոյութիւն ունեցող այս կամ այն՝ իրանց ճաշակի համաձայն՝ քաղաքական կուսակցութեան հետ միանալու և կամ մի նոր, ինքնուրոյն կուսակցութիւն հիմնելու, պահանջում հնաւաքարել Դաշնակցութիւնը բուրժուազական տարրելից (իմա «հայկական դատի») համար աշխատել ցանկացողներից) և գարձնել նրան «գասակարգային հողի վրա գործող» (իբր թէ) «սօցիալիստական կուսակցութիւն»:

Հայակեան կուսակցութիւնից բաժնակած և Դաշնակցութեան հարլիկի համար դուսես պայքարող ձախակողմեան սոցիալիստ տարրերի միջև եղած միւս տարրերութիւնն էլ այն է, որ մինչ առաջինները, ինչպէս ասացինք, միանալով Ռ.-Ս. Դ. Բ. կուսակցութեան հետ, սրանց հետ աշխատում են զուտ գասակարգային հողի վրա, ջանալով միշտ պարզելու բարձրացնել շահագործվող հայ մասսանների դասակարգային գիտակցութիւնը, կրթել այդ մասսանները սօց-դեմոկրատական միջազգային համերաշխ քաղաքականութեան դաշտավայրում ու աշխարհայեցողութեամբ, պ. պ. «սօցիալիստ» գայնակցականները, ճիշտ գրա հակառակը, ամեն ճիզ ու ջանք գործ են դնում, որպէսզի հնարաւոր եղածին չափաւելի ու աւելի մթնացնեն ու խաւարեցնեն նոյն այդ մասսանների գասակարգային գիտակցութիւնը, կրթելով նրանց ամենախիստ և թունաւոր շօվինիզմով:

Զափազանց բնորոշ է դաշնակցականների համար այն հանգամանքը, որ ինչպէս Տաճկաստանի նրանց գործունեութիւնն էր կրում զուտ ֆէյերվերկային և ի «փառս Դաշնակցութեան» բնաւորութիւն, այնպէս էլ նոյն բնաւորութիւնն է կրում նրանց կովկասեան և նամանաւանդ «սօցիալիստական» գործունեութիւնը: Նոյն անհեռատեսութիւնը, նոյն իրանց անելիքը չը հասկանալը, նոյն միջոցների մէջ խորութիւն չը դնելը, նոյն քաօսը, նոյն անբարտաւանութիւնը և նոյն հասկացողութիւնների ու մաքերի խառնափնթորութիւնը:

Նայեցէք, թէ ի՞նչպէս են նրանք կազմակերպում պրօֆեսիօնալ միութիւնները, ի՞նչպէս են վերաբերվում կամ ի՞նչպէս են վարում գործադուները, ի՞նչպէս են պաշտպանում «աշխատաւոր մասսաների» շահերը: Բոլոր ժամանակ նրանք ոչ թէ աշխատաւոր մասսաների, այլ միմիայն և միմիայն Դաշնակցութեան նեղ թայֆայական շահերով են զեկավարվում: Դաշնակցութեան զուտ ազգայնական բնաւորութիւնը չը կորցնելու համար, նրանք, հակառակ մեր երկրում եղած զանազան ազդութիւնների մէջ տիրապետող ազգային ամենասուր անտագօնիզմի և շօվինիզմի, պրօֆեսիօնալ միութիւններն էլ զուտ ազգային հողի վրա են գնում և այդպիսով, կարծես թէ դիտմամբ, աշխատում են խանգարել այն միջազգային համերաշխութիւնը, որը խոշոր արդիւնագործութեան ու կապիտալիզմի շնորհով հետզհետէ սկսում է գոյանալ հայ, թուրք և վրայի բանուորների միջև: Գործադուների ժամանակ անգամ «սօցիալիստ» դաշնակցականները թայֆայական ու շօվինիստական տեսակէտներով են զեկավարվում: Իսկ ի՞նչ ասել այն անբարոյականացնող նորաձեռ սիստէմին, որ դաշնակցականները «աշխատաւոր մասսաների» շահերը պաշտպանել են անուանում: Տնային կամ մի այլ ժառայութեան է մանում զիցուք մի որեէ կարստեա, և, մի քանի օր աշխատելուց յիտոյ, նրան մի որեէ պատճառով արձակում են իր պաշտօնից: Այդ արձակման երկրորդ օրը ահա դալիս է Կարապետը մի քանի «զինուորնե-

րով», որոնք կտրական կերպով յայտարարում են Կարապետի վարձովին, որ նա պարտաւոր է Կարապետին երեք ամսավան ոռնիկ վճարել, այլապէս...: Կարապետը ստանում է պահանջված գումարը և գնում վարձվում է մի այլ խօզէյինի մօտ, որտեղ սակայն գարձեալ մի քանի օր է միայն ծառայում և նորից գուրս է գալիս ու նորից..., «զինուորների» աշխակցութեամբ երեք ամսավան ոռնիկ է ստանում և նորից գնում մի այլ տեղ վարձվում: Այս եղանակով գաշնակցական «աշխատաւոր» Կարապետը, ամբողջ տարվայ մէջ ընդամենը 12—15 օր աշխատելով, մի ամբողջ տարվան ոռնիկ է ստանում: Այս եղանակով որ գատարկապորալ չի ցանկանայ Դաշնակցութեան «աշխատաւոր մասսաների» մէջ մտնել և ա լա դաշնակցական սօցիալիստ դառնալ...

Այդպէս են դաշնակցականները պրօֆօնացիայի ենթարկում ամեն մի սուրբ գաղափար, այդպէս են նրանք հասկանում սօցիալիզմն ու աշխատաւորների շահերը, կամ աւելի ճիշտ ասել՝ այդպէս է նրանց ձեռնուու հասկանալ այդ բոլորը. չէ որ նրանց ամբողջ տեսչն ու ձգառումը հէնց նըրա մէջն է կայանում, որ Դաշնակցութիւնը բազմամարդ լինի. «փոյթ չէ նրա «հետերօթէնութիւնն» ու բազմագոյնութիւնը,—ասում են նրա՝ իրանց քաօսային հասկացողութիւններով սաստիկ «հօմօծէն»՝ իդէօլոգ շէֆերը,—այդ բոլորը հետպհնեաէ կը «բիւրեղանայ» և մի զանգուած կը ըստացիր»:

Սակայն կեանքի անորոք իրականութիւնը չատ տևելի զօրեկ է, բան չէֆերի ծակ փիլիսոփայութիւնները: Ինչպէս որ այս իրականութիւնը ջախջախեց նրանց բոլոր յօյսերն ու սպասելիքները «հայկական զատի» վերաբերեալ ու նըրանք կանգ առան, չիմանալով այլիս ուր երթալ և ի՞նչ անել, ինչպէս որ նա՝ իրականութիւնը ընդամենը մի տարվան ընթացքում շարժեց ու տակն ու վրա արեց ամբողջ 15 տարվան գաղափարի կողմից հոտած ձահիճը և զիֆերենցիացիայի ենթարկեց նրա միապաղաղ շարքնրը, բաժանելով նրանց առ այժմ չորս ճիւղերի, այնպէս էլ այդ նոյն իրա-

կանութիւնը իր հրամայողական կօնկրէտ պահանջներով շատ շուտով կը կարասի այդ ճիւղերին միմեանց կապող՝ արդէն չափազանց հնայած ու փոտած՝ թոկերը և իր գիրեկտիվներով կը հրամայի նրանցից իւրաքանչիւրին՝ իր սեփական ուղին մշակել ու ընթանալ նրա վրայով:

Թէ Դաշնակցութիւնը և թէ Հնչ. կուսակցութիւնը արգեն կատարել են իրանց պատմական գերերը. նրանք այլ ևս անելիքներ չունեն ոչ Տաճկաստանում և ոչ էլ Կովկասում: 15—20 տարի առաջ գոյութիւն ունեցող պայմաններն ու հանգամանքները Մասիսի թէ միւս կողմում և թէ այս կողմում, որոնց շնորհեւ ու որոնց մէջ ծագում էին ըստացել ու զարգացել այդ կուսակցութիւնները, այլ ևս բոլորովին փոխված են: Հետեւապէս թէ այնտեղ և թէ այստեղ պէտք է գործել բոլորովին նոր ծրագրներով, նոր մեծողներով ու նոր եղանակներով: Ինչ վերաբերում է կովկասեան գործունէութեան ծրագրին ու եղանակներին, այդ շատ որոշ ու շատ պարզ է, այստեղ և ոչ մի յեղափոխական գործունէութիւն չէ կարող ազգայնական հողի վրա դրվել. նա պիտի խիստ դասակարգային բնաւորութիւն կը: Թէ Դաշնակցութեան և թէ Հնչակեան շարքերը, որոնք մինչև այսօր միմեանց կապված էին ազգայնական գաղափարներով ու ձգումներով, ուղեն-չուզեն, պիտի զատվեն միմեանցից և պիտի միանան իւրաքանչիւրը իր գասակարգային շահերին համապատասխան կուսակցութիւնների հետ: Այդպէս է պահանջում իրականութիւնը, այդպէս է պահանջում իրերի զարգացման ընթացքը, և նէնց այդպէս էլ անպատճառ կը լինի, հակառակ գաղանակցական շէֆերի բոլոր բէալցիօն ջանքերի:

Իսկ ինչ վերաբերում է Տաճկաստանի գործունէութեանը, զրա համար էլ անհրաժեշտ է մանրագննին վերաքննութեան ենթարկել ամբողջ 15—20 տարվան անցեալի գործունէութիւնը, և, այդ անցեալի սխալների ու ներկայ նոր պայմանների և հանգամանքների ցուցմունքներով դեկապարզելով, պիտի մշակել բոլորովին մի նոր ծրագիր ու գործունէութեան նոր եղանակներ:

Թէ կովկասեան և թէ Տաճկաստանի գործունէութեանց համար Դաշնակցութիւնն ու Հնչակեան կուսակցութիւնը հանդիսանում են այլ ևս իրեն հին տիկեր, որոնց մէջ անհարին է նոր գինի լցնելը. նոր գինու համար անհրաժեշտ են նոր տիկեր...:

ԳՐԱՆ է 15 ԿՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0343577

